№ 75 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 10

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 10 № 75

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ապրիլի 11-ին, չորեքշաբթի,

ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

„ՅՈՒՇԱՐԱՐ“

Թատերական-գրական-գեղարուեստական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

երկշաբաթաթերթի № 4-ը

հետեւեալ բովանդակութեամբ

Հայ բեմը 1906—7 թատերաշրջանին.—Լէօյի 25-ամեայ յոբելեանը. — Հայ Դրամատիկ Ընկերութեան ընդհանուր ժողովը.—Թատրօն.—Աւետար... յանուն գեղարուեստի.—«Պարտաւոր էք մեզ էլ հաշուի առնել».—Երգիծանքներ.—Կոմիտաս վարդապետի համերգը Պարիզում.—Յովհ. Նալբանդեանի նուագահանդէսը Թիֆլիսում.—«Արցունքի հովիտը».—Բաղդասար աղբօր նամակները.—Նամակներ խմբագրութեան.—Մեր պատկերները.—Գեղարուեստական լուրեր.—Յայտարարութիւններ.—Սոյն համարում կան հետեւեալ պատկերները՝—Լէօ.—Քէչիչեանի՝ Ախական երաժշտական ընկերութեան խմբանկարը.—տ. Վարդունի.—Բաղդիկ։

Նոր բաժանորդները լրիւ կը ստանան լոյս տեսած բոլոր համարներն ու յաւելուածները։

Հասցէն՝ Ред. «Ушараръ», Сергіевск. ул. № 3, Тифлисъ, կամ Rédaction du journal «Houcharar», Tiflis։

առ. 1—1

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻՉ“

հումոր, սատիրիկ-սիմվօլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

VI-րդ համարը,

որը և ուղարկվեց բաժանորդներին նաև

„ԱՆԻ“

հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կոպ.։

Բաժանորդներին ուղարկվեց ձրի իբրև «Սափրիչի» 1 պրէմիան։

Տարեկան բաժանորդագինն է պրէմիայով 2 րուբլի, իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 րուբլի 50 կոպ.։

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46 18.

«ՍԱՓՐԻՉ»-ի խմբագրութիւն

ե. ջ. առ. 17—25

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

- ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
- Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլէքտրօբուժութիւն։
- Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ.։
- Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
- Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջների։
- Մ. Գ. ԿԻՄՕՆՑ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։
- Գ. Ա. ԲԷՅԷՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։
- Ի. Ն. ԹՈՒՄԱՆՈՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Փիքսրօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին օթեակներից։

առ. ե. հ. կ. 32—100

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անաստասեւսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախորդ յայտարարութեան համաձայն։

Երթեւեկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12, հետեւեալ բժիշկների ձեռքով.

- Ա. Ր. Ֆիշէր.—երեքշաբթի, շաբաթ։
- Ա. Գ. Բարսուկով.—չորեքշաբթի։
- Ս. Գ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։
- Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ։

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումիկօվը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկօ-միկրօսկօպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։

Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստում և այլն։

(հ. շ. ե.) 25—50

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՄԱՍՆԱԳԷՏ

սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու հիւանդութիւնների։

Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.
Սօլօլակ, Բեհբութեան փող. № 33։
(ա. օ.) առ. 36—50

№ 21 ՀԱՅԵԼԻ № 21

Լոյս կը տեսնէ հինգշաբթի, ապրիլի 12-ին։ Լրագրավաճառները, որոնք № 4 պրեմիայից մի-մի օրինակ չեն ստացել, կըստանան այս համարի հետ։

առ. (ե. չ. հ.) 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմից. Օգնութեան գործը. Վերջին տեղեկութիւններ. Մաքուի խանութեան մէջ. Պետական Դումայի շուրջը. Դրութիւնը Ջիւանշիրի, Խաչէնի և Թառթառի հովիտներում. Ժողովրդական համալսարանում. Պետական Դումայի մահմեդական ֆրակցիայի անհամաձայնութիւնը. Կառավարչական շրջաններում. Դաւադիրների ժողովը. Մի անյետաձգելի գործ. Թատրօն և երաժշտութիւն. Պետական Դումա. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Հերմէս» տպարանում տեղի ունեցած մասնակի գործադուլի պատճառով «Մշակի» վերջին համարը լոյս չը տեսաւ։

Գործադուլը ոչ մի կապ չունէր «Մշակի» խմբագրութեան հետ, բայց տպարանի բոլոր բանուորները միացել էին իրանց ընկերների մի մասի պահանջները առաջ տանելու համար։

Տպարանը խոստացել է այսուհետեւ ազատ պահել մեզ այդպիսի պատահարներից։

Լրագրական գործի վրա ամեն մի գործադուլ չափազանց ծանր է ազդում։ Կան նիւթեր, որոնք կարող են տպվել միայն մի յայտնի օր, և յետոյ այլ ևս կորցնում են իրանց նշանակութիւնը։ Եւ չը տպվելով՝ այդ նիւթերը ոչ միայն իրանք են կորչում, այլև ուրիշ անախորժ արդիւնքներ են առաջացնում։ Այդպէս են հեռագրական հաղորդագրութիւնները։ Այդպէս են յայտարարութիւնները։ Այդպէս են ժամանակագրական տեղեկութիւնները։

Իսկ բացի այդ դիզվում են գաւառական հաղորդագրութիւններ, յօդուածներ և բանակռուական նամակներ, որոնց տպագրութիւնը այնուհետեւ դժուարանում է թէ տեղի պակասութեան և թէ նոր, թարմ նիւթի առատութեան պատճառով։

Շնորհիւ նախկին գործադուլների, մենք ստիպված ենք եղել շատ նիւթերի տպագրութիւնը յետ թողնել և անախորժ հարցապնդումների ենթարկվել։

Յայտնելով այս բոլորը, մենք կարեւոր ենք համարում ընդգծել, որ «Մշակի» խմբագրութեան կողմից գործադրվել են ամեն տեսակ ջանքեր վերացնելու այնպիսի առիթներ, որոնք կարող էին թիւրիմացութիւններ առաջ բերել և գործադուլի պատճառ դառնալ։

Բայց միայն մեզնից չեն կախված առիթները։ Նրանք ծագում են մեզնից դուրս և առաջացնում են գործադուլ, որը տարածվում է և այն բոլոր հրատարակութիւնների վրա, որոնք գտնվում են տպարանում։

Մեր լրագրի հետ միասին լոյս չը տեսան և տպարանում գտնվող միւս հրատարակութիւնները։

Տպարանը յոյս է տալիս, որ այլ ևս չեն կրկնվի այդպիսի դէպքեր։

Յուսանք։

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

I

Աղէտեալ տեղերում սկսվել է գիւղական դաշտային աշխատանքը։

Արտերը հերկվում են ամեն տեղ։ Բայց դժբաղդաբար նրանք ընդարձակ տարածութեամբ չեն հերկվել բոլոր շրջաններում, որովհետեւ գիւղացիների ոյժը պակասել է առաջվայ համեմատութեամբ։

Ղազախի, Գանձակի, Արէշի, Ջիւանշիրի, Շուշու և Նախիջեւանի գաւառներում արդէն կան տարածութիւններ, որոնց վրա գարնանացանի սերմ է ցգված։ Իսկ աշնանացանը բուսել է և առ այժմ յոյսեր է տալիս, եթէ դժբաղդ պատահարներ տեղի չունենան։

Գիւղացիները առ այժմ ցանում են գարի և գետնախնձոր։ Պատրաստւում են կորեկ ցանելու աւելի ուշ։

Սերմացու տալու ժամանակը հէնց այժմ է։ Լեռնային տեղերում գիւղացին կը շարունակէ սերմանել միայն մայիսի կէսը, իսկ շատ բարձրադիր տեղերում մինչև մայիսի վերջը։

Ով կարողանայ աջակցել հողագործին սերմացու ձեռք բերելու և արտերը ցանելու, նա հասցրած կը լինի հիմնական օգնութիւն, որը պէտք է մի պուդ հացահատիկը դարձնէ երեքպատիկ, հնգապատիկ կամ տասնապատիկ պաշար գիւղացու համար։

II

Մենք կը տանք տեղեկութիւններ օգնութեան, նպաստների մասին, որոնք յայտնի կը դառնան մեզ համար։

Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի կողմից Բագու գընացած լիազօր Ս. Տէր-Պօղոսեանը բաժանել է սերմացուի համար նշանակած 3000 րուբլին և ստուգել է բաղացիների նախօրօք վերցրած 1000 րուբլու հաշիւը։

Բաղացիները ներկայումս ցանում են իրանց արտերը և օգնութիւնը հասել է իր ժամանակին։ Գիւղացիների կարիքը սակայն աւելի մեծ է։ Նրանք պակասութիւն են զգում նաև լծկան կենդանիների և գիւղատնտեսական գործիքների։

Կան գիւղացիներ, որոնք չունենալով եզներ և գութան, մշակում են իրանց հողերը բահով։

Ուտելու հացի պակասութիւն կըզգացվի մինչև յուլիսի վերջը, երբ արդէն հասած կը լինի աշնանացանը։

Նպաստը բաժանվել է շնչի հաշւով։ Բացի այդ՝ գիւղի ամենաաղքատ ընտանիքներին տրված է լրացուցիչ մէկական րուբլի։ Անշուշտ գիւղական կարիքը աւելի մեծ է, քան հասցրած օգնութիւնը։

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապրիլի 6-ին Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի նախագահ Գարեգին արքեպիսկոպոսը Պետերբուրգից Յ. Սաղաթելեանից ստացել է հետեւեալ հեռագիրը.

Մարտի 31-ին մինիստրութիւնը Գանձակի նահանգի կարիքաւոր ազգաբնակութեան համար փոխադրեց 135,440 ր.։

—

Հին-Նախիջեւան, 7 ապրիլի.—Պարսկաստանում, Երեւանի նահանգին կից ընկած Մաքուի խանութեան մէջ խոշոր անկարգութիւններ են տեղի ունենում։ Ապստամբ սարբազների ձեռքով գահընկէց եղող նահանգի խանը, որ չը հնազանդվեց պարլամենտական կուսակցութեան, Նախիջեւանից անցաւ Երեւան։ Նրա պալատը և ահագին կալուածքը կործանված են։

(«Հ. Գ.»)

—

Ալի Ասկար խանը, որ գտնվում էր Վիեննայում, Շահից ստացել է մի հեռագիր հետեւեալ բովանդակութեամբ. «Իսկոյն ճանապարհվեցէք. գործ ունեմ ձեզ հետ»։ [redacted] ճանապարհ է ընկել դէպի Պարսկաստան։ Նախ քան մեկնելը, «Neue Freie Presse» լրագրի թղթակիցը վրա հասնելով՝ նախկին սադրազամի կարծիքն է խնդրել Պարսկաստանի մասին։ Ալի Ասկար խանը յայտնել է, որ ինքը ամենաջերմ կուսակից է սահմանադրութեան և սրտանց ցանկանում է հիմովին փոխված տեսնել Պարսկաստանի այժմեան վարչական եղանակը և մօտ՝ ժամանակի պահանջմանց համաձայն բարենորոգումների մէջ։ Աթաբէգը աւելացրել է, որ ցանկանում է նոյնպէս այդ բարենորոգումների գործին հմուտ և ազնիւ եւրօպացիների աջակցութիւնը։ Ասկար խանի կարծիքով անգլօ-ռուս յարաբերութիւնների բարւոքումն ու համաձայնութիւնը օգտաւէտ է ոչ միայն Պարսկաստանի, այլ և ամբողջ ասիական երկրների համար։ Պարսկաստանը չէ ցանկանում հպատակվել ոչ Ռուսաստանին և ոչ էլ Անգլիային։ Նա կամենում է լինել ազատ ու անկախ։ Նա մեծ ուրախութեամբ բաց կանէ իր դռները միջազգային առեւտրի առաջ։

—

Բագու, 4 ապրիլ։ Երեկոյեան ժամը 5-ի մօտերը, մահափորձ կատարվեց տեղս գտնվող պարսից կառավարական գլխաւոր ինժեներ Միրզա Աբաս խանի կեանքի դէմ։ Նրա վրա կրակեցին չորս անգամ. գնդակներից մէկը ծակեց թիկունքը, միւսը խրվեց ստամոքսի մէջ։ Կրակողներից մէկը ձերբակալվեց։ Վիրաւորվածի դրութիւնը վտանգաւոր է։

(«Հ. Գ.»)

—

«Баку» լրագիրը հետեւեալ մանրամասնութիւններն է հաղորդում պարսից ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան գլխաւոր ինժեների կեանքի դէմ կատարած մահափորձի մասին։ «Ապրիլի 4-ին, երեկոյեան ժամի 6-ի մօտերը ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան գլխաւոր ինժիները Միրզա-Աբաս խանը կառքով մօտեցաւ Թաղիեւի նաւահանգստին՝ նաւ նստելու համար։ Երբ Միրզա-Աբաս խանը դուրս եկաւ կառքից, մի անյայտ մարդ կրակեց նրա վրա և ծանր վիրաւորեց նրան մէջքից։ Կրակողը դիմեց փախուստի Մերկուրեեվսկի փողոցով. Նրան հետապնդող քաղաքապահները և մահմեդականները կրակեցին նրա ետեւից մի քանի անգամ, սակայն գնդակները վրիպեցին։ Ձերբակալել են կասկածով պարսկահպատակ Մահմեդ-Ալի-Բալա-օղլուն»։

—

Րաշտ, 8 ապրիլի.—Էնզէլիից եկած Աթաբէկ-Ազամին պարսիկների ամբոխը սպանելու սպառնալիքով ստիպեց վերադառնալ կրկին նաւը։

(«Հ. Գ.»)

—

Էնզէլի, 8 ապրիլի. — Առաւօտեան ժամը 9-ին նախկին սադրազամը ռուսաց գեներալ-հիւպատոսի ուղեկցութեամբ «Կօնստանդին» նաւից իջաւ և աջող մըտաւ Էնզէլի, ուր հանդիպեցին ռուսաց իշխանութիւնները և տեղական վաճառականական դասը։ Ժամը 10-ին վէզիրը կօզակներով մեկնեց Թէհրան։

(«Հ. Գ.»)

—

Մեզ գրում են Թաւրիզից ապրիլի 2-ից

Այստեղ դրութիւնը շատ երկիւղալի է։ Մեծ խլրտումներ կան։ Պարսիկ ժողովուրդը առանձին էներգիայով հրացանաձգութեան վարժութիւններ է անում։ Հրացանի ձայներ են, որ լսվում են ամեն կողմից։

Կատարեալ անարխիա է տիրում. Խանութները բացվում են ու կողպվում։ Ցրված դրութեան մէջ են ամենքը։

Այսօր էլ շշուկներ էին պտտում, որ իբրև թէ Թաւրիզի պարսիկները յարձակվում են գործել մի պարսկական գիւղի վրա, թալանել, սպանել և այլն։

Տրամադրութիւնը վատ է։ Տեսնենք ինչ վախճան կունենան այս բոլորը։

Ս.

—

Թէհրան, 8 ապրիլի.—Պարլամենտին հաղորդված է, որ ազգային բանկը ժողովել է պետական փոխառութեան համար անհրաժեշտ բոլոր գումարը, սակայն Շահը չէ ցանկացել հաստատել բանկի հետ կապված համաձայնութիւնը։

(«Հ. Գ.»)

—

Բաթում, 8 ապրիլի. — Երեկոյեան ժամը 11-ին՝ կրկնվեց ուժեղ մրրիկ։ Կործանված են փոքր շինութիւնները։ Հողմերը զգալի վնասներ հասցրին ագարակութեան։

(«Հ. Գ.»)

—

Բագու, 7 ապրիլի.—Գործադուլ արին Բալախանում, ելեկտրական կայարանի բանուորները. այդ պատճառ դարձաւ, որ ելեկտրականութեամբ աշխատող շատ նաւթահանքեր դադարեն գործելուց։

(«Հ. Գ.»)

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՄԱՔՈՒԻ ԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Այսօր հեռագրական գործակալութիւնը հաղորդում է, որ Մաքուի խանութեան մէջ խոշոր դէպքեր են տեղի ունեցել։

Այդ դէպքերը շարունակութիւն են կազմում այն մեծ դրամայի, որ պարսկական յեղափոխութիւն անունն է կրում և պարսկական մէջահիդների—յեղափոխականների գործն է։

1906 թւի դեկտեմբեր ամսին Թաւրիզի յեղափոխական կոմիտէտը—«անջումանը» օգուտ քաղելով Մաքուի Մուրթուզա-Կուլի խանի բացակայութիւնից, որ այդ ժամանակ գտնվում էր Նախիջեւանում Փանահ-խան Էրիվանսկու որդու հարսանիքին, իր անդամներից մի քանիսին ուղարկում է Մաքու, որոնք գալով այնտեղ, ժողովրդական ժողով են գումարում և իրանց ղեկավար են ընտրում խանութեան ժամանակաւոր կառավարիչ Իզաթուլլա խանին, Մուրթուզա-Կուլի խանի եղբօր որդուն։ Դրանից յետոյ «անջումանը» նամակներով դիմում է Մուրթուզա Կուլի խանին պահանջելով կամ բարենորոգումներ տալ ժողովրդին կամ այլեւս չը վերադառնալ։

Այդ առիթով «Закавказье» լրագրի մէջ տպագրված մի յօդուածում ասված է, որ Մուրթուզա Կուլի խանը փետրվարի սկզբներում մօտենում է իր խանութեան սահմանի Փօոնակ գիւղին և այնտեղից մարդիկ է ուղարկում մի քանի գիւղեր օգնութիւն խնդրելով, բայց գիւղացիները մերժում են։ Դրանից յետոյ նա դիմում է քրդերի ներկայացուցիչներին և առաջարկում միասին գրոհ տալ Մաքու քաղաքի վրա և աւերել նրան։ Սակայն քրդերից էլ միայն երեք գիւղ համաձայնվում են ընդունել խանի առաջարկութիւնը։

Այդ իմանալով «անջումանը» 2000 ձիաւորներ է ուղարկում Փօոնակ գիւղը. քրդերը փախուստ են տալիս, իսկ Մուրթուզա Կուլի խանը գերի է ընկնում։ Խանութեան նոր կառավարիչ Իզաթուլլա-խանը իր հօրեղբօրը դատապարտում է մի քանի տարվայ աքսորի Պարսկաստանի սահմաններից դուրս։ Եւ ապրիլի 6-ին Մուրթուզա Կուլի խանը հեռանում է Մաքուի խանութիւնից։ Իսկ նրա գնալու յաջորդ օրը լաւ սպառազինված մէջահիդները (յեղափոխականները) յարձակվում են և աւերում այն 3 քուրդ գիւղերը, որոնք ընդունել էին Մուրթուզա Կուլի խանի առաջարկութիւնը։ Քուրդերի պարագլուխները կալանաւորված են, որոնց թւում գտնվում է և յայտնի Կալէյը։ Լրագրական այդ յօդուածագիրը ասում է, որ ներկայումս Մաքուի խանութեան մէջ խաղաղութիւն է տիրում և ժողովուրդը շատ գոհ է մարդասէր Իզաթուլլա խանից, որը «անջումանի» հետ միասին կառավարում է խանութիւնը։

Թւում է, որ հեռագրական գործակալութեան տուած տեղեկութիւնները վերաբերում են այդ անցքերին։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի։ Տեղական դատարանի բարենորոգման օրինագծերը քննող դումայական մասնաժողովը, արդարադատութեան մինիստրի օգնականի, մինիստրութեան իւրիստ կօնսուլտի և վարչութեան վերատեսչի մասնակցութեամբ, ձայների ահագին մեծամասնութեամբ ընդդէմ մէկի—որոշեց չընդունել ստացուածքային ցենզը տեղական դատարանում դատաստանական պաշտօններում ընտրվողների համար և սահմանեց կրթական ցենզ բարձր իրաւաբանական կրթութեամբ։ Միւս ժողովին մասնաժողովը որոշեց հրաւիրել ժողովրդական լուսաւորութեան մինիստրի միջոցով Պետրաժիցկի և Կամենկա պրոֆէսօրներին և արդարադատութեան մինիստրի միջոցով—Կարնիցկի և Վալտեր սենատորներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի։ Նակազը քննող դումայական մասնաժողովը ընդունեց նրա առաջին գլուխը առաջին Դումայի խմբագրած ձեւով, միայն դուրս հանեց մինիստրների խորհուրդի չը հաստատած 16-րդ կէտը, և յետաձգեց 17 և 14-րդ կէտերի քննութիւնը, որոնք խօսում են էկսպերտների մասին։

Նահանգական դատարանի դատախազի օգնական Րուբանը մենամարտ առաջարկեց Դումայի անդամ Նալիվկինին, որը Դումայում արտասանած ճառում վիրաւորել էր ռուսաց դատախազութիւնը։ Սօցիալ-դեմօկրատական ֆրակցիան, որի անդամն է Նալիվկինը, մարտահրաւէրը անթոյլատրելի համարեց, որովհետեւ Նալիվկինը խօսել է ոչ թէ իր անունից, այլ ֆրակցիայի յանձնարարութեամբ։

Մատակարարական ժողովը որոշեց անմիջապէս Դումա մտցնել ներքին գործերի մինիստրութեան առաջարկը՝ 22 միլիօն յատկացնելու մատակարարական գործը գլուխ հանելու համար։

Նախահաշւի մասնաժողովը քննելով ֆինանսների մինիստրութեան ելեւմուտը, տեղական կենտրօնական հաստատութիւնների վրա ծախսած ծախքերը տեղին և բաւարար ընդունեց։

Ապրիլի 6-ի նիստում Դումայի նախագահին՝ հռետորներին ընդհատելու առիթով ներկայացրած բողոքագիրը ստորագրել են բացառապէս սօցիալ-դեմօկրատները և սօցիալ-յեղափոխականները։

Նակազը քննող մասնաժողովը ընդունեց երկրորդ և երրորդ գլուխները առաջին Դումայի խմբագրութեամբ, փոխելով համաձայն սենատի նկատողութիւնների—24, 33 և 43-րդ յօդուածները։

Նահանգական դատարանը ուշ գիշերով արդարացրեց Դումայի անդամ Պուրիշկեվիչին, որը պատասխանատուութեան էր հրաւիրված Բեսարաբիայի զեմստվային վարչութեան անդամ Դումսկուն մամուլում զրպարտելու համար։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՋԻՒԱՆՇԻՐԻ՝ ԽԱՉԷՆԻ ԵՒ ԹԱՌԹԱՌԻ ՀՈՎԻՏՆԵՐՈՒՄ

(Խաչէնի ձորակից՝ 17 անմեղ բանտարկեալների (Գանձակի բանտում) և յիշեալ ձորակներում իշխող սովի մասին)

Առաջաձոր, մարտի 27-ին

Այսօր լուր ստացվեց, որ շնորհիւ յայտնի փաստաբան Զարուդնին և ղլիշտուեցի գանգատաւոր Թուրքերի, Խաչէնի Ձորակի գիւղօրայքից՝ Գանձակի բանտում բանտարկված (յիշեալ Թուրքերի գործի վերաբերեալ)՝ 17 անմեղ հայերը, որոնց բանտում լինելը համարեա 1 և կէս տարի է, ազատված են։ Խաչէնի Ձորակի բնակիչների և մանաւանդ յիշեալ՝ բանտից ազատվածների՝ ծննդավայրում բախտի խնամքին թողած բազմանդամ ընտանիքներին ուրախութեանը չափ ու սահման չը կայ։ Տեսնենք ինչպիսի ընթացք կունենայ՝ Խաչէնի Ձորակից՝ միեւնոյն գործի համար պահանջվող 34 անմեղ անձանց գործը։

Յիշեալ ձորակներում իշխող ահռելի ու սարսափելի սովը տխուր տպաւորութիւններ է թողնում։ Չը նայած մեր լրագրութեան միջոցով հրատարակած յիշեալ ձորակների սոսկալի ու սրտաճմլիկ վիճակը, լաց ու կոծը, աղերսանքը... այնուամենայնիւ մինչև այսօր ոչ մի տեղից համարեա բնաւ օգնութեան նշոյլներ չեն երեւում։ Կալուածատէր Գ. Մար. Դօլուխանեանցը նամակով բարեհաճել էր կարգադրել իր կառավարչին՝ գնելու 400 ր. հաց. ու գարնանացանի համար սերմացու բաժանելու իր կալուածում ապրող սովեալներին (Խաչէնի Ձորակի՝ առաջաձորցիներին, ծմակահողեցիներին և Թըմըլըղուեցիներին). սակայն յիշեալ կառավարիչը այդ բարի ու ուրախալի համբաւը ժողովրդին յայտնելուց յետոյ, ասաց, որ իր մօտ կանխիկ դրամ չը կայ, այլ եղածը ուրիշների մօտ է, աւելացնելով որ պէտք է մի կերպ աջողեցնէ այդ դրամը ձեռք բերելու և ապա պ. կալուածատէրի առաջարկութիւնը կատարելու։ Եւ ցաւը հէնց նրանում է, որ յիշեալ փողը չէ աջողվում ստանալու այն անձնաւորութիւններից, որոնք պարտ են յիշեալ կալուածատէրին, իսկ մինչև այդ դրամը դուրս գալը, սովեալները սովամահից փչանում են. հաւատացէք ձեռքից ընկնում են։

—Սրանից մի քանի օր առաջ, եկել էին Խաչէնի Ձորակի Առաջաձոր գիւղը Նպաստամատոյց Յանձնաժողովի ու Կուլտուրական Միութեան «միացած» (ըստ իրանց յայտնութեան) մարդիկը, որոնք ստուգելով ահռելի սովի իսկութիւնը, նորից ցուցակագրեցին սովեալներին (որովհետեւ առաջին ցուցակի մէջ ամենածայրահեղ սովեալներին էին մտցրել, այն էլ շատ քիչ թւով. օրինակ, Առաջաձորի նման 300 տուն ունեցող գիւղից մտցրել էին սովեալների ցուցակների մէջ միայն 40—45 չքաւորների, չը նայած, որ ազգաբնակութեան համարեա 100/0 է կարողանում իրանով մի կերպ ապրել) և ապա խոստացան շուտափոյթ հասցնելու հարկաւոր օգնութիւնը։ Սակայն սրտի ցաւով յայտնում եմ, որ մինչև օրս սովեալները չեն ստանում խոստացված նպաստը, չը նայած, որ չքաւորները կրիտիքական ու տագնապալից մօմենտներում են գտնվում...։ Եւ միթէ այդպիսի թշուառ վայրկեաններում, կարելի է դանդաղօրէն գործել...

—Ժողովուրդը ձեռքից ընկնում է... հաւատացէք ընկնում է...։ Եւ իսկապէս որ իրականանում են մեր այն գուշակութիւնները, որ միշտ կրկնում էինք, թէ՝ «սովից զոհեր առաջ գալը անխուսափելի է»։ Համարեա ամեն օր յիշեալ՝ բժշկական օգնութիւններից իսպառ զուրկ՝ հովիտներում մարդկային զոհեր են լինում։ Համեմատաբար ուրիշ ժամանակների հետ, այժմ շատ մեռնողներ են լինում...։ Մեռնում են յանկարծակի, անյայտ ու անանուն հիւանդութիւններից։ Այդ զոհերը սովամահից են։ Ժողովուրդը յուսահատ դրութեան մէջ դրսից օգնութիւն է սպասում անհամբեր։ Գիւղով անցնելիս՝ արտասուալից աչքերով ու աղաղակներով վազում են դէպի անցորդը գեղջկուհիները ու երեխաները և հաց են պահանջում, աղերսում...։ Մի ուրիշ գեղջուկուհի, և մէջի այլոց ասում է. «Ա՜յ չէին երեւի մարդիկ, էսա օր առաջ յայտնում էմ ձեզ՝ վաղը հասկանաք, որ ես ու երեխաներս սովամահից մեռել ենք։ Էսա քանի օրա մենք միայն «ժանգալով» (կանաչեղէն) ենք ապրում, կերակրվում...»։

Այդ բոլոր ցաւերի հետ տակաւին պէտք է միաւորացնել և այն ցաւը, որ այդ ձորակների ազգաբնակութիւնը բացի ուտելու հաց չունենալուց, չունի և գարնանացանի համար սերմացու։ Դեռ անցեալ 1906 թւի աշնանը մեր բարեգործական հաստատութիւնների մարդիկը խոստացան գարնանացանի սերմացու տալու չունեւորներին և վերջինները անհամբեր սպասում էին, սակայն յիշեալ հաստատութիւնների մարդիկը այժմ ասում են, որ սերմացու չը կայ չունեւորներին տալու, աւելացնելով որ եղածը գտնվում է Ելլարի երկաթուղու կայարանում և հայերը վախենում են գնալու այնտեղից այդ սերմացուն բերելու համար, իսկ իրանք միջոց չունեն Թուրքերին բերել տալու։

Բացի այդ ցաւերից կայ մի ուրիշ ցաւ, այն է, որ յիշեալ ձորակների բնակիչներից շատերին, եթէ աչողվի էլ սերմացու (գարնանացանի) ձեռք բերելու, մէկ էլ առանց լծկանների են մնալու նրանք, առանց վար ու ցանքսի, որովհետեւ եղած լծկանները նրանք ծախել ու փողը միսել են՝ հաց գնելով...

—Հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն, թէ հացով, թէ գարնանացանի սերմով և թէ դրամով, թէ չէ վար ու ցանքսի սեզոնը ձեռքից ընկնում է...։ Գիւղի համայնքի չքաւորները գարնանացանքս չանելով, այնուհետեւ աւելի ողբալի կը դառնայ նրանց վիճակը, ապա գան...

Օգնութեան նշոյլներ բնաւ չեն երեւում...։

Սրանից մի քանի օր առաջ յիշեալ հաստատութիւնների մարդիկը հացի նպաստ տուեն միայն՝ Թարթառի Ջորակում գտնվող Հաթերք կամ Հասան-Րիզ գիւղի սովեալներին, իսկ յիշեալ ձորակների մնացած տասնեակ գիւղօրայքի սովեալները տակաւին մնում են բախտի քմահաճքին. Նրանք աչքերը դէպի երկինքը գցած, միայն վերեւից են օգնութիւն, ողորմութիւն հայցում. Նրանք տեսնելով, որ իր ժամանակին (այսինքն նշանակած ժամանակին) նպաստը չէ հասնում, ընկնում են յուսահատութեան մէջ...։

Սովեալները չեն դիմանում, ուստի հարկաւոր է նպաստը շուտ հասցնել։ Ժողովրդական առակն է ասում, որ «կուշտը քաղցածին մանր կը բրդէ...»։

Սակայն չը պէտք է այդպէս վարվել...։

Հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն, թէ չէ ուշացել է, հասել է յիշեալ ձորակների բնակիչների ճգնաժամը...։

Ժողովուրդը անհամբեր ու յուսահատ դրութեան մէջ օգնութեան է սպասում, բայց ինչ արած, որ երկնքի դռները կապվել են ու մի կաթիլ անձրեւի ջուր չէ կաթում, վայր չէ ընկնում վերեւից այրված աշխարհը հովացնելու համար։

—Եւ հէնց այդպէս է մեր յիշեալ Թշուառ ձորակների ներկայ վիճակը, ճակատագիրը, այդպէս է նրա պատմական սոսկալի դրութիւնը...։

Նորից ու կրկին ենք աղերսանքով ու Թախանձագին հրաւիրում շուտափոյթ ուշադրութիւնը պատշաճաւոր բարեգործական հաստատութիւնների ու ունեւոր և բարեգործ մարդկանց։

Բ. Զաքարեան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 8-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամի 11-ին Զուբալովի ժողովրդական տանը նշանակված էր Ա. Քալանթարի դասախօսութիւնը՝ «Գիտութիւնը ժողովրդի համար»։

Նշանակված ժամից 20 րոպէ անց, դասախօսը սկսեց իր դասախօսութիւնը, և մի քանի համառօտ խօսքերով բացատրելով, որ ներկայ դարի նպատակն է գիտութիւնը մատչելի դարձնել ժողովրդի լայն խաւերի, նկատեց, որ մենք այդ կողմից, դժբաղդաբար, շատ յետ ենք մնացել։

Գիտութիւնը,—ասաց դասախօսը,—հին դարերում, երբեմն մենաշնորհ գտնվում էր քուրմերի ձեռքում և ծառայում էր որպէս ույժ հեղինակութիւն ունենալու համար։ Ինչպէս որ կապիտալը ույժ է ներկայ տնտեսական կեանքում, զէնքը ույժ է գոյութեան կռւում, անկասկածելի մի ույժ է և գիտութիւնը։

Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հին ժամանակ գիտութիւնը աշխատում էին գաղտնի պահել, Թագցնել ժողովրդից։

Նոյն երեւոյթը նկատվում է և մեր ներկայ հասարակական կեանքում. ստեղծվում են զանազան խոչընդոտներ, չեն ուզում էժանացնել, և այլն։

Սակայն հին և նոր կեանքի պայմանները գիտութեան վերաբերմամբ շատ տարբեր են. առաջ նշանակութիւն չէին տալիս նրան, իսկ այժմ ընդհակառակը, ամենքն են նշանակութիւն տալիս և ամենքը ձգտում են իւրացնելու այդ ույժը։ Եւ մեր աչքի առաջ բոլոր ազգերը առաջ են գնացել ու գնում են, իսկ մենք յետ ենք մնացել։

Գիտութեան նշանակութիւնը պարզելու նպատակով, դիւրըմբռնելի դարձնելու համար թէ ինչ դեր է խաղում գիտութիւնը կեանքում, բերեց մի քանի հանրամատչելի օրինակներ. բացատրեց Պաստերի արած մեծ ծառայութիւնը, որի հետազօտութիւնների շնորհիւ վերջ դրվեց շերամի այն համաճարակ հիւանդութեան, որ մինչեւ այդ գիւտը միմիայն Ֆրանսիային 100 միլիոնից աւելի վնաս էր տալիս։ Պաստերի ցուցմունքները այսօր տարածված են հեռու աշխարհների շերամապահութեամբ պարապվող ժողովուրդների մէջ և նրանք ապահովված են այդ վնասից։ Նոյն բարերար հետեւանքները տուեց պատուաստելու միջոցը, սիբիրախտի և ջրվախութեան բժշկութիւնը։ Այժմ էլ փորձեր են անում բժշկելու քաղցկեղը (ракъ) նոյն շաւղով։

Ինչպէս յայտնի է, գիւղացի երկրագործ ժողովուրդը մեծամեծ վնասներ է կրում զանազան բուսական հիւանդութիւններից, օրինակ, Թռչից, չորից, կայծից։ Բաւական փորձերից յետոյ կարողացան գտնել միջոցներ այդ վնասների առաջն առնելու համար. մի հիւանդութիւն բժշկում են ծծումբով, միւսը պղնձի արջասպով և այլն։ Այժմ հանդէս է եկել մի ուրիշ սոսկալի չարիք, օրինակ, Թիֆլիսի նահանգում, դաշտային մկները, որոնք ուտում են բուսականութիւնը և ոչնչացնում են նրա անտեսութիւնը։ Ահա դրա դէմ գտնված է մի տեսակ հեղուկ, որի մէջ Թաթախելով հացը՝ ցրում են դաշտերում և մկները ուտելով նրան՝ վարակվում են և իրար վարակելով սատկում, ոչնչանում։ Այդպիսով մենք տեսնում ենք, որ գիտութիւնը մարդկային կեանքում մի ուժեղ զէնք է բնութեան պատահարների դէմ կռւելու համար։

Այնուհետեւ դասախօսը օրինակ վերցրեց բնագիտութիւնից — օդերեւոյթաբանութիւնը — եղանակի նախագուշակութեան մասին։ Ամենքիս յայտնի է, ասում է դասախօսը,—թէ ինչպէս մեր ժողովուրդը դիմում է եփերմվերդիների և զանազան կախարդների օգնութեան, Թէեւ գիտէ, որ դա անոտիապաշտութիւն է։ Նա ստիպված է դիմել նրանց օգնութեան, որովհետեւ դժբախտաբար, նախագուշակութիւնները մեզնում շատ Թոյլ են։ Եւրոպայում այդ նպատակով հիմնված են բազմաթիւ կայարաններ, որոնք նախագուշակում են թէ ինչպիսի եղանակ կը լինի մի քանի ամսից, մի քանի օրից յետոյ, և այլն։ Եւ դրանք անգին օգուտներ են տալիս, ապահովելով ժողովրդին՝ սպառնացող պատահարներից։ Մեզանում այդպիսի ցանցեր չը կան և մենք ստիպված ենք օգտվել ուրիշ տեղերի կայարաններից։ Օրինակ, ներկայ գարնան ցրտերի մասին ցուցումներ տալիս են Պետերբուրգից, մինչդեռ աւելի ճիշտ տեղեկութիւն կունենայինք, եթէ մենք ունենայինք տեղական մի այդպիսի կայարան։

Մեր երկիրը, որ իր լճերով, արընթաց գետերով մեզ համար չարիք, դժբախտութիւն է Թւում, նրանք անկասկած բարիք են մեզ համար, եթէ մենք կարողանայինք օգտվել գիտութիւնից։ Այդ արընթաց գետերը զարկ կը տային ելեքտրականութեան զարգացմանը և այդ ելեքտրականութիւնը կը ծառայէր լուսաւորութեան համար, որոնցով այնքան հարուստ են մեր այդ անպէտք, դըժբախտութիւն համարվող լեռները։

Գիտութիւնից զուրկ լինելու պատճառով մենք չենք կարողանում օգտվել մեր հարուստ բնութիւնից։

Ապա շօշափեց ժողովրդի ազատութիւնը իրաւագիտութեան մէջ, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ ժողովրդապետութեան մասին է լսվում ամեն կողմից, երբ ժողովուրդը ինքն է ուզում իր գործերը ղեկավարել, ինքը իր տէրը դառնալ։ Միր ժողովուրդը ամեն մի ընտրութեան ժամանակ, ասաց դասախօսը, նոյնիսկ պարլամենտական ընտրութեան վրա, որտեղ օրէնսդիր մարդիկ են հարկաւոր, նայում է իբրեւ մի խաղի վրա, առանց իրան հաշիւ տալու, բոլորովին անփոյթ կերպով։ Նա այսուհետեւ պէտք է աշխատի ուսանել հասարակական և իրաւաբանական գիտութիւններ։ Դժբաղդաբար ներկայումս մեզնում այնքան դպրոցներ չը կան, որքան որ գինետներ. պատճառը, ի հարկէ, այն է, որ գիտակցութիւն չը կայ ժողովրդի մէջ։ Պէտք է աշխատել ինքնակրթական խմբեր տարածելու ժողովրդի մէջ, բանալ դպրոցներ, ուղարկել գրքեր, շրջիկ ուսուցիչներ։ Դրանով միայն մենք կարող ենք տալ ժողովրդին այն մեծ ույժը, զէնքը, որ կոչվում է գիտութիւն։ Գիտութիւնը պէտք է լինի ոչ թէ մասնաւոր մարդկանց սեփականութիւն, այլ ընդհանուր ժողովրդի։ Մեզանից ամեն մէկը պէտք է լինի ֆանատիկոս գիտութիւնը տարածելու, գիտութիւնը ժողովրդականացնելու գործում։ Դասախօսը վերջացրեց իր դասախօսութիւնը հետեւեալ նշանաբանով.

Գիտութիւնը՝ ժողովրդի կեանքում և գիտութիւնը ժողովրդի համար։

Աշխատակից

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱՅԻ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պետերբուրգում հաւաքված երեսուն և հինգ մահմեդական պատգամաւորների միջեւ այժմեանից արդէն ծագել են անհամաձայնութիւններ։

Անցեալ տարի մահմեդական պատգամաւորները մի խմբակ կազմելով՝ իրանց սեփական ծրագրով և ուղղութեամբ գործում էին ու գործելու էին։

Այդ ծրագիրը ընդհանրապէս կադետների ծրագրին մօտ էր, բայց կազմված էր այնպիսի եղանակով, որ բաւականութիւն տայ մահմեդականների որոշ, առանձնայատուկ կարիքներին ու պահանջներին և համաձայն լինի իսլամին։

Մահմեդական ֆրակցիան պէտք է իր նպատակներն ու գործողութիւնները որոշէր Պետերբուրգում տեղի ունեցած մահմեդական ընդհանուր համագումարի կողմից ընտրեալ բիւրոյի հետ համերաշխութեամբ և գործէր, ամեն հարցում, նախապէս գծված ուղղութեամբ։

Այդ բիւրօն կարեւոր հիմնարկութիւն էր այն տեսակէտից, որ մահմեդականները Ռուսաստանի ո՛ր մասում էլ ապրելիս լինէին, ո՛ր ժողովրդին էլ պատկանելիս լինէին գտնվում էին միեւնոյն դրութեան, միեւնոյն պայմանների տակ։

Ամեն տեղ մահմեդականները, լինեն Թուրք թէ Թաթար, կօզակ թէ լեզգի, տաճիկ թէ Թիւրքմէն, նոյնքան իրաւազուրկ են, նոյնքան ճնշված։

Ահա այդ պատճառով, այդ տեսակէտից մահմեդական պատգամաւորների մահմեդականների վերաբերեալ հարցերում միանալը ու համերաշխ լինելը հարկաւոր էր ու անհրաժեշտ։

Բայց դրանից՝ մահմեդական ֆրակցիան՝ եթէ բիւրօյի ցուցմունքների համաձայն գործէ, իր գործունէութեան զարգացման տեսակէտից էլ ձեռնտու կը լինի, որովհետեւ բիւրօն՝ հաստատված լինելով բոլոր մահմեդականների կողմից, կարող է մահմեդական պատգամաւորին զանազան ծառայութիւններ մատուցանել թէ նիւթապէս և թէ բարոյապէս։

Այնուամենայնիւ, պէտք է նկատել, որ ի հարկէ իւրաքանչիւր մահմեդական պատգամաւոր ազատ էր պետական ընդհանուր հարցերում իր սեփական համոզմունքի և ուղղութեան համեմատ գործելու և քուէարկելու, և մանելու այն քաղաքական կուսակցութեան մէջ, որը նրան դուր է գալիս։

Սակայն, ափսոս, որ հէնց Դումայի բացումից, մեր պատգամաւորների միջեւ անհամաձայնութիւններ ծագեցին։ Մի քանիսը բաժանվելով՝ կազմեցին առանձին կուսակցութիւն։ Իսկ յայտնի չէ, թէ մնացեալները միասին պէտք է գործեն թէ ոչ։

Եթէ այդ երկպառակութիւնը շարունակվի, եթէ չը գտնվի մի անձ կամ մի ույժ, որ Պետական Դումայի մեր մահմեդական պատգամաւորներին համախմբէ մի կուսակցութեան մէջ, անկասկած մեր պատգամաւորները Դումայում կը զրկվեն որեւէ ազդեցութիւնից, որեւէ գործօն դերից, որովհետեւ Դումայի կամ պարլամենտի նման ժողովներում մի կուսակցութեան, մի ժողովրդի ազդեցութիւնն ու ույժը կախված է այդ կուսակցութեան, այդ ժողովրդի ներկայացուցիչների միաբանութիւնից և կարգապահ գործունէութիւնից։

Պարլամենտի ասպարէզը նմանում է շախմատի ասպարէզին։ Այդ ասպարէզում հարկաւոր են միայն հմուտ, գիտուն, զարգացած, գործերի ծանօթ անձնաւորութիւններ։ Երեսունհինգ պատգամաւորների ձայնը՝ կշեռ նժարում մեծ ու ծանր մի քար է։ Ամենակարեւոր հարցերը յաճախ վճռվում են 5—10 ձայնի առաւելութեամբ։ Դրա համար էլ իր ձեռքում երեսունհինգ ձայն ունեցող մի անձ կարող է իր ազգի և ժողովրդի համար մեծ օգուտներ տալ, մեծ շահեր ապահովել։ Որեւէ մի կուսակցութեան յարելուց առաջ, այդ անձը պէտք է նախ նոյն կուսակցութիւնից խոստում ստանայ, կուսակցական հարցերից դուրս, մահմեդական ֆրակցային օգնելու և այդ կերպով միայն մահմեդականներին յատուկ խնդիրները անցկացնելու։

Ի հարկէ, մահմեդական ֆրակցիան չէ կարող ամեն կուսակցութեան յարել. մահմեդական ֆրակցիան պէտք է ունենայ քաղաքական, հասարակական, տնտեսական իր որոշ ծրագիրը։ Այդ ծրագիրը, ինչպէս վերեւ յայտնեցինք, ընդհանուր առմամբ համաձայն էր կադետների ծրագրին։

Իսկ այս տարի մեր պատգամաւորներից ոմանք չեն բաւականանում այդ ծրագրով, ուզում են աւելի առաջ, աւելի ձախ գնալ։ Բայց մի՞թէ այդ տեսակ չնչին անհամաձայնութիւնները կարող են ֆրակցիայի քանդման պատճառ լինել։ Մի՞թէ կարելի չէ, որ մահմեդական պատգամաւորները մի տեղ հաւաքվելով՝ ամեն մարդ իր սեփական համոզմունքը յայտնէ և իւրաքանչիւրը Թոյլատու վերաբերվելով՝ կազմվի մի լայն ծրագիր և այդ ծրագրի վրա հաստատ մնան։

Կրկնում ենք, եթէ այդ բանը չիրագործվի, մեր մահմեդական պատգամաւորները Դումայում ոչ մի ազդեցութիւն չեն կարող ունենալ։ Նրանք պիտի հալվեն, ոչնչանան միւս կուսակցութիւնների մէջ։ Եւ որովհետեւ ամբողջ Ռուսաստանը և նրա հետ ռուս պատգամաւորները, որքան որ էլ լիբերալ լինէին, մեր դրութեան հետ ծանօթ չեն, մահմեդականների յատուկ խնդիրները բոլորովին աննկատ պիտի անցնեն և նոյն իսկ քննութեան չը պիտի դրվեն։

Ահմէդ բէգ Աղայեվ

(«Իրշադ»)

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

VII

Բարձր շրջանները միանգամից լռեցին. սակայն այդ լռութիւնը ժամանակաւո՞ր է։ Ո՞վ գիտէ ինչ ձախորդութեան հանդիպեցին նրանց ինտրիգները Դումայի վերաբերմամբ և Թափը կորցրած ետ քաշվեցին, նորից հանդէս գալու աւելի կազմակերպված, աւելի ուժեղ։ Եւ չարագուշակ, հակասական ու խառնափնթոր շշուկները կը վերսկսվեն դարձեալ։

Դեռ մի շաբաթ առաջ Դումայի արձակելը անխուսափելի էր համարվում։ Աջակողմեաններին յարուցած սկանդալը և ապա Պուրիշկեվիչին նիստերի դահլիճից արտաքսելը աւելի ևս լարեց ջղերը, ներշնչելով գաղտնի անհանգստութիւն Դումայի ճակատագրի համար։ Այդ բոլորը մանաւանդ աւելի կրկնապատկվեց Ստոլիպինի և Դումայի նախագահի միջեւ ծագած վերջին կոնֆլիկտի պատճառով, որը գնալով աւելի է սուր կերպարանք ստանում։

Պուրիշկեվիչի սկանդալը ոչ միայն որեւէ ազդեցութիւն չունեցաւ Դումայի գործունէութեան վրա, այլեւ նա աննպաստ տրամադրութիւն ստեղծեց հէնց աջակողմեանների իրանց համար։ Գալով Ստոլիպինի և Դումայի նախագահի միջեւ ծագած միջադէպին՝ պէտք է նկատել, որ նա դեռ համարվում է իբրեւ մասնաւոր մի դէպք և, ինչպէս Ստոլիպինը ինքն էր ասել, չէ կարող պատճառ լինել Դուման արձակելու։

Այսպէս Թէ այնպէս, անկասկածելի է, որ Դումայի շուրջը այժմ խաղաղ տրամադրութիւն է նկատվում. այդ հանգամանքը հասարակական զանազան խաւերում յոյս է ներշնչում, որ Դուման կը մնայ։ Եւ Դուման բազմաթիւ սպառնական շշուկների միջից անցնելով մինչեւ օրս էլ շարունակում է իր գործունէութիւնը աւելի խաղաղ ու ժրաջան կերպով։

Երկար կը տեւէ՞, արդեօք, այդ խաղաղ տրամադրութիւնը։ Դժուար է նախատեսել։

VIII

Այն, ինչ որ տեղի է ունենում Դումայի շուրջը, մի սուտ խաղ է։

Սպառնական շշուկներ տարածելուց յոգնած՝ ռէակցիօն բարձր շրջանները կանգ առան. մթնոլորտը սկսեց խաղաղվել և արդէն երեւան է գալիս Դումայի համար բարենպաստ տրամադրութիւն։

Ինչպէս սպառնական շշուկների, այնպէս և խաղաղ տրամադրութեան տարածողը սենսացիօն լուրերի սիրահար՝ արտասահմանեան մամուլի Թղթակիցներն են։

Հաղիւ հասարակական վրդովված կարծիքը մամուլի միջոցով փորձեց մատնանշել ու պարզել Դուման արձակելու մասին տարածված սպառնական շշուկների խակական աղբիւրը, և ահա դաւադիր ինտրիգները իրանց նեղ շրջանակի մէջ սահմանափակվեցին։

Իսկ պղտոր կոհակների միջից սկսեցին դուրս լողալ ուրիշ յուսատու, նպաստաւոր լուրեր։ Միթէ ռէակցիօն շրջանները հրաժարվեցին իրանց դիտաւորութիւններից ու պարտված զգացին։ Ամենեւին ո՛չ.—Ռէակցիան որ բաղկացած է «միացեալ ազնուականութեան» խմբակից, դարձեալ զօրեղ է։ Սակայն նրանց լռութիւնը ոչ թէ Թուլութեան կամ պարտութեան հետեւանք է, այլ ներքին երկպառակութեան։ Լրագրական վերջին տեղեկութիւններից երեւում է, որ պալատական և բիւրոկրատական շրջաններում խուլ մրցութիւն կայ, որը գնալով աւելի սուր կերպարանք է ստանում զանազան խմբակների մէջ։

Չը պէտք է մոռանալ, որ միանգամից Ստոլիպինին փոխարինելու համար առաջ են քաշվել մի քանի Թեկնածուներ՝ Գորեմիկին, Դուրնովօ, իշխ. Վասիլչիկով, Կոկովցեվ, Կրիվօշէին. անշուշտ դրանցից իւրաքանչիւրը մի որոշ խմբակի Թեկնածու է, և, եթէ դրա վրա աւելացնելու լինենք Ստոլիպինի խմբակն էլ, կը տեսնենք, որ վեց խմբակներ գործում են, համարեա թէ իրարից անջատ։ Եւ եթէ Ստոլիպինի խմբակը կարողանում է դեռ ևս գերակշռող դեր խաղալ, պարտական է մասամբ այդ նպաստաւոր հանգամանքներին, բայց գլխաւորապէս այն հեռանկարին, որից սարսափելու հիմք ունեն արտօնեալ տարրերը։

Չը նայելով դրան, ռէակցիօն շրջանները երբեք չեն կորցնում հին ռէժիմը վերադարձնելու իրանց ցնորքները և եթէ նրանք այժմ որեւէ երկիւղ ունեն, այդ այն է, որ մի գուցէ Ստոլիպինը իր խիստ սահմանադրական գործունէութեամբ ոչնչացնէ այդ ցնորքները։

Ահա դրանով են բացատրվում Ստոլիպինի դէմ լարվող ինտրիգները, որոնց նպատակն է տապալել նրա կաբինեան։ Մինչեւ իսկ այդ ուղղութեամբ նորից են շշուկներ լսվում։

Հաւանական պէտք է համարել այդ լուրերը թէ ոչ. այդ բոլորովին ուրիշ խնդիր է։ Հարցը նրանումն է, որ արտասահմանեան Թերթերի Թղթակիցները լաւատեղեակ աղբիւրների հիման վրա հաղորդում են, որ Դումայի արձակման խնդիրը նորից է քննութեան նիւթ դարձել բիւրոկրատական շրջաններում։ Ինչպէս առաջ, այնպէս և այս վերջին անգամ, Ստոլիպինը նորից է կրկնել, որ Դուման արձակելու մասին խօսք անգամ լինել չէ կարող։

Եւ այս անգամ նրա կարծիքը պաշտպանել է ֆինանսների մինիստր Կոկովցեվը, որ առաջ ինտրիգներ էր լարում և աշխատում Դումայի արձակումը շտապեցնել։ Պէտք է կարծել, որ նրա Թեկնածութիւնը ֆիասկօ է կրել, այդ պատճառով էլ նա միացել է Ստոլիպինին։

Այդպիսով Դուման արձակելու հարցը վերացված է առ այժմ։

L

ԴԱՒԱԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Մամուլի մէջ յաճախ է գրվել այն մասին, որ ներկայումս մեր կառավարութեան ամբողջ քաղաքականութիւնը ղեկավարվում է խոշոր կալուածատէր ազնուականների ձեռքով։ Ազնուականներն են ամեն բանի մէջ ուղղութիւն ու տոն տուողը, նրանք են ամեն ինչ Թելադրողը։ Ինչպէս երեւում է, այդ ազգաւաս ժողովրդային ցեցերը չափազանց դժգոհ են թէ Պետական Դումայից և թէ մանաւանդ այնտեղ քննվող ու քննվելիք մի շարք օրինագծերից և, կասկածելով, թէ մի գուցէ Ստոլիպինի կառավարութիւնը յանկարծ Թուլանայ ու լուրջ զիջումներ անի ի նպաստ ժողովրդի և ի վնաս արտօնեալ ազնուականների, նրանք շուտափոյթ համագումար ժողով են հրաւիրել, մի շարք «կարեւոր» որոշումներ անելու համար։ Այդ ժողովը ազնուականների 32 միացեալ ընկերութիւնների 3-րդ ժողովն է և նա բացվել է մարտի 27-ին Պետերբուրգում։

Ինչպէս մայրաքաղաքի Թերթերն են հաղորդում, համագումար ժողովին եկել են մօտ 100 պատգամաւորներ՝ ներկայացուցիչներ համարեա թէ բոլոր նահանգներից։ Ժողովի աշխատանքներին մասնակցում են Պետական Խորհրդի անդամներից շատերը, ինչպէս և Պետական Դումայի անդամներից մի քանիսը։ Ինչպէս և պէտք էր սպասել, ժողովականներից շատ-շատերը զանազան իշխաններ, կոմսեր և այլ այդ կարգի տիտղոսաւոր անձնաւորութիւններ են։

Ժողովի նախագահ ընտրված է կոմս Ա. Ա. Բոբրինսկի, իսկ օգնականներ՝ իշխան Ն. Փ. Կասատկին-Րօստովսկի և Ա. Ա. Նարիշկին։

Ժողովի առաջին նիստում քննվել է այն հարցը, թէ ինչպէս պէտք է ազնուականների համագումարը վերաբերվի տեղական ինքնավարութեան ռեֆորմին։ Այդ խնդրի մասին զեկուցումն չէ եղել ժողովում, բայց հարցը անյետաձգելի է համարվել, որովհետեւ կառավարութիւնը այդ մասին արդէն օրինագիծ է մտցրել Պետական Դումա։

Տեղական ինքնավարութեան հարցի քննութեան ժամանակ, համագումարը խիստ քննադատութեան է ենթարկել «լիբերալ» մինիստրութիւնը, որը իբր թէ իր կազմած օրինագծի մէջ զանց է առել «առաջնութիւն ունեցող դասակարգին» և ինքնավարութեան ամբողջ գործը յանձնել է «հայրենիքի Թշնամիների» ձեռքը։ Երկար ու բուռն վիճաբանութիւններից յետոյ, ժողովը որոշել է յանձնաժողով ընտրել, այդ խնդրի մասին զեկուցում կազմելու և այնպիսի «պահանջներ» մշակելու համար, որոնց ազնուականութիւնը պիտի կառավարութեանը ներկայացնի տեղական ինքնավարութեան օրինագիծը Պետական Դումայում քննվելուց դեռ առաջ։ Յանձնաժողովը իսկոյն ընտրվել է, որի մէջ մտել են 30 պատգամաւորներ, և նրան պատուէր է տրվել զեկուցում ներկայացնել «կարելի եղածին չափ շուտով՝ 24 ժամվայ ընթացքում»։

Մարտի 28-ի նիստում ժողովը ծանօթացել է ազնուականների միացեալ ընկերութիւնների խորհրդի կազմած այն «առաջարկութեան» հետ, որը վերաբերում է գաւառական ոստիկանութիւնը ուժեղացնելու և տեղական դատարանի հարցերին (այդ «առաջարկութիւնը», ինչպէս և այն «առաջարկութիւնը», որը վերաբերում է յեղափոխական-ագրարային յանցանքների համար կառավարութեան պատասխանատուութեան հարցին, խորհրդի կողմից արդէն ներկայացված են մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինի ուշադրութեանը)։

Այդ «առաջարկութեան» մէջ ասված է, որ այն տեղերում, ուր կալուածատէր ազնուականների հողատիրութեանը վտանգ է սպառնում գիւղացիների կողմից, ազնուականների միացեալ ընկերութիւնների խորհուրդը առաջարկում է մեծացնել հեծեալ ստրաժնիկների կազմը և ուժեղացնել նրան որակի կողմից։ Ոստիկանական պաշտօնի մէջ մանել ցանկացողներից պէտք է հիմնաւոր պատրաստութիւն պահանջել, նկատի առնելով այն հանգամանքը, որ եղել են դէպքեր, երբ ստրաժնիկները չեն իմացել, թէ ինչպէս պէտք է զէնքի հետ վարվել։ «Երբեք չը պէտք է Թոյլ տալ, — ասված է «առաջարկութեան» մէջ,—որ ստրաժնիկները ծառայեն իրանց ծննդավայրում կամ նոյնիսկ ծննդավայրի շրջակայքում։ Պէտք է այնպէս դասաւորել ոստիկանութիւնը, որ նա ոչ մի բանով կապված չը լինի տեղական բնակչութեան հետ»։ Եւ այդ, շատ պարզ է. նրա համար միայն, որ ոստիկանները, իրանց ծառայութեան վայրում ոչ մի ծանօթ կամ բարեկամ չունենալով ապստամբ գիւղացիների մէջ, շատ աւելի անգթութեամբ վարվեն նրանց հետ և ոչ ոքի չը խղճան և չը խնայեն։

Այդպէս են տեղական ոստիկանութեանը վերաբերեալ «ռեֆորմի» հիմնական կէտերը։

Ազնուականների միացեալ ընկերութիւնների խորհուրդը մի «ռեֆորմ» էլ դատաստանական խնդիրների վերաբերեալ է առաջարկում։ Նա առաջարկում է, որ մասնաւոր սեփականութեան դէմ կատարված յանցանքների համար ընդհանրապէս և անտառները կտրատելու, ուրիշի արօտատեղիներից ինքնագլուխ կերպով օգտվելու և ուրիշի հողերը ցանելու համար մասնաւորապէս, յանցաւորները աւելի խիստ պատժի ենթարկվեն, քան մինչեւ հիմա։ Խորհուրդը առաջարկում է սովորական դատարանների իրաւասութիւնից հանել բոլոր ագրարա-յեղափոխական յանցագործութիւնները և «բացառիկ» դատարանների յանձնել դրանք։ Նա առաջարկում է նոյնպէս մեծացնել դատարանների ու քննիչների կազմը, որպէսզի արագութեամբ կատարվեն գործերը։ «Առաջարկութեան» վերջում խորհուրդը արդարադատութեան մինիստրի ուշադրութիւնն է հրաւիրում տեղական դատաստանական հաստատութիւնների ոչ գոհացուցիչ լինելու վրա։

«Առաջարկութեան» բովանդակութեան հետ ծանօթանալուց յետոյ, ժողովը անցել է ազնուականութեան համագումար ժողովների կանոնագրութեան քննութեանը։

Այդ մասին եղած վիճաբանութիւնները շատ լուրջ տարաձայնութիւններ են երեւան հանել ազնուականների կազմակերպութեան ինչպիսի բնաւորութիւն կրելու հարցի վերաբերեալ։ Ժողովականների փոքրամասնութիւնը այն կարծիքն է պաշտպանել, թէ ազնուականների կազմակերպութիւնը պէտք է զբաղվի այնպիսի խնդիրներով, որոնք բացառապէս դասային բնաւորութիւն են կրում, այլ ոչ թէ ընդհանուր պետական բնաւորութիւն։ Մեծամասնութիւնը բոլորովին այլ կերպ է նայել ազնուականութեան կատարելիք դերի վրա։ Երկար ու տաք վիճաբանութիւններից յետոյ ահագին մեծամասնութեամբ ընդունվել է կանոնագրութեան հետեւեալ կէտը.

«Ազնուականների նահանգական ժողովների պատգամաւորներից կազմված համագումարները նպատակ ունեն միմեանց հետ միացնել ազնուականների ընկերութիւնները, մի ընդհանուր օղակի մէջ շղթայապել ամբողջ ազնուականութիւնը, միասին քննելու և կեանքի մէջ անցկացնելու համար այնպիսի խնդիրներ, որոնք թէ ընդհանուր պետական և թէ զուտ դասային բնաւորութիւն են կրում»։

Այս յօդուածի դէմ քուէարկել են Պսկովի և Պետերբուրգի ներկայացուցիչները միայն։

Բայց ամենից բնորոշն ու հետաքրքրականը այն է, թէ ինչպէս են մակաբոյծ ազնուական կոմսերն ու իշխանները վերաբերվում Պետական Դումային։

Թէեւ այդ խնդիրը, ինչպէս հաղորդում են, ժողովի օրակարգում պաշտօնապէս չը կայ, բայց նա ամենից շատ է զբաղեցնում ժողովականներին և ամենակարեւոր տեղն է բռնում։

«Համագումարի պատգամաւորների մէջ,— ասում է «Товарищъ» Թերթը,—շատ տաք խօսակցութիւններ են տեղի ունենում այն մասին, թէ անհրաժեշտ է ցրել Դուման և թէ պէտք է դիմում անել, որ կարելի եղածին չափ շուտով արձակեն նրան։ Ժողովականներից մի քանիսը ենթադրում են, որ շատ մեծ ուշադրութիւն պիտի դարձնի ժողովը նաեւ ընտրողական օրէնքը փոփոխութեան ենթարկելու հարցի վրա»։

Մամուլի ներկայացուցիչները չեն Թոյլատրվել իշխանազուն ազնուականների ժողովին ներկայ գտնվելու. և դա շատ հասկանալի է. պ. պ. ազնուականները մի կատարեալ դաւադրութիւն են հիւսում Ռուսաստանի դէմ և միթէ նրանք Թոյլ կը տան այդ ոճրագործ ակտը երեւան հանելու...

Ռ.

ՄԻ ԱՆՅԵՏԱՁԳԵԼԻ ԳՈՐԾ

Երեւան, ապրիլի 1-ին

Երեւանի Թեմական Դպրանոցի հոգաբարձութեան հրաւէրով այսօր քաղաքային խորհրդարանի դահլիճում կայացաւ աշակերտների, ծնողների և հայ հասարակութեան մի ընդհանուր ժողով, որի քննութեան էին առաջարկվում, ա) Թեմական դպրանոցի իր հին շինութիւնը փոխադրութեան հարցը և բ) նոյն Թեմ. դպրանոցի համար նոր շինութիւն կառուցանելու խնդիրը։

Ժողովը բացվեց ժամի 11-ին, մօտ 100 հոգու ներկայութեամբ. նախագահում էր պ. Գրիգոր Տէր Խաչատրեան։

Մի ժամի չափ տեւող այդ ժողովը անցաւ բոլորովին խաղաղ, առանց տաք վիճաբանութիւնների։ Հարցն ամենքի համար էլ շատ պարզ էր. ամենքն էլ համակարծիք էին և եթէ վէր էին կենում ճառելու, այդ միայն մի նպատակով, որ մի քանի նոր աւելացրած խօսքերով դարձեալ պնդեն միեւնոյնը։ Եւ նրանք հաստատում էին՝ ա) որ Թեմ. դպրանոցը վերադարձնել իր հին շէնքը անկարելի է և միանգամայն ոչ-ցանկալի. բ) որ ուրիշ վարձովի շինութիւնները շատ անյարմարութիւններ են ներկայացնում դրա համար և գ) որ անհրաժեշտ է Թեմ. դպրանոցի համար նոր շէնքի կառուցումը, քանի որ դրա համար կան և նիւթական միջոցներ։

Թեմ. դպր. հին շէնքը գտնվելով քաղաքի հարաւ-արեւմտեան հեռաւոր ծայրում, մեծ դժուարութիւն է պատճառել երեխաներին՝ այդ երկար ճանապարհն ամեն օր գնալ գալու համար, մանաւանդ որ նրանցից ոմանք գալիս էին Նորքից և մինչեւ իսկ Քանաքեռից։ Այդ ճանապարհը ձգվում էր քաղաքի բազարի երկարութեամբ, որտեղ մանուկ սերունդը շարունակ ստիպված էր լինում ականատես լինելու փողոցային աղեղ տեսարանների, լսելու անվայել խօսքեր, որոնք խիստ վատ էին ազդում երեխաների բարոյականութեան վրա։ Դպրանոցի շէնքը նոյն իսկ բոլորովին չէ համապատասխանում դպրոցական և առողջապահական տարրական պահանջներին։

Ահա այս ամենը վերջին երկու տասնեակ տարիներում շարունակ յիշեցնում էին դպրանոցի բաղդով հետաքրքրվող հասարակութեանը և նախորդ հոգաբարձուներին՝ դպրանոցի տեղափոխման և նոր շինութեան անհրաժեշտ խնդիրը, որը սակայն միշտ էլ անկարելի էր դառնում դրամական սղութեան պատճառով և այդպիսով Թեմական դպրանոցն իր գոյութիւնը մի կերպ քարշ էր տալիս հին շինութեան մէջ շարունակ նրան նորոգելով, կարկատելով...

Երկու տարի առաջ Երեւանում սկսված հայ-Թուրքական ընդհարումները անհնարին դարձրին աշակերտների երթեւեկութիւնը Թուրքաշատ մէյդանով, նոյնիսկ դպրանոցը գտնվում էր Թուրքերի Թաղին շատ մօտ. վտանգաւոր ու երկիւղալի դրութիւն էր և հոգաբարձութիւնն ստիպված եղաւ տեղափոխել դա հայկական Թաղը։ Անցեալ տարի վարձված էր մի շինութիւն, այս տարի տեղափոխեցին մի ուրիշ տեղ, սա էլ անյարմար է և ահա այսպիսով հերթական էր դառնում Թեմ. դպր. կամ հին շէնքը տեղափոխելու կամ նոր շինութիւն կառուցանելու հարցը։

Ինչպէս ասացինք, այդ օրվայ ժողովը միաձայն վճռեց այդ առաջին հարցը բացասական մտքով, իսկ նոր շէնք շինելը—դրական։

Եւ իսկապէս, ինչ շահ, եթէ նրա օգտին կըտակված հանգուցեալ Ն. Թայիրեանի մեծ գումարը դրված կը մնար բանկում բերելով 4 տոկոս և միեւնոյն ժամանակ հոգաբարձութիւնն ստիպված պիտի լինէր տարէնը մի նոր տեղ որոնել դպրանոցի համար և միշտ էլ աշխատէր մի կերպ «հօլա տանել», համակերպելով բազմաթիւ անյարմարութիւնների հետ։ Մի լաւ շէնքն աւելի հաստատուն դրամագլուխ է Թեմ. դպր. համար, քան թէ նաղդ փողը, որը միշտ կարող է ենթարկվել պատահականութեան, անհրաժեշտ ծախսերի և մի քանի տարուց յետոյ հալչել...

Թէեւ ժողովում ցանկութիւն յայտնվեց իմանալ այն տեղը, որը մտադիր էր գնել հոգաբարձութիւնը, բայց դրա յայտնելն անյարմար էին գտնում հոգաբարձուները ասարկելով, որ դա կարող է պատճառ դառնալ ընտրած տեղի Թանգանալուն։

Հոգաբարձութիւնն անշուշտ այդպիսի լիազօրութիւն ստանալուց յետոյ կաշխատի բազմակողմանի կերպով մշակել այդ խնդիրը և երկրորդ անգամ աւելի բազմամարդ ընդհանուր ժողովի որոշման ներկայացնել թէ այն տեղը, որ նա մտադիր է գնել և նրա գինը, նոյնպէս և ապագայ շէնքի յատակագիծն ու նրա նախահաշիւը և այն կողմնակի աղբիւրները, որոնց օգնութեան պիտի դիմէ եթէ չը բաւականացնի Թայիրեանի գումարից որոշված մասը։

Գալով այն ժամանակամիջոցին, որը նոյնպէս ցանկալի էր համարվում նախապէս որոշելու որ յետոյ անվերջ չը յետաձգվի, կարծում ենք, ներկայ հոգաբարձութիւնը, որը այսպիսի պատուաբեր նախաձեռնութիւն է յանձն առել այդ անյետաձգելի գործը գլուխ բերելու համար, ամեն կերպ պիտի աշխատէ, որ շինութիւնն աւարտված և պատրաստ լինի ամենաշատը երեք տարուց յետոյ, երբ լրանում է նրա լիազօրութեան ժամանակը և կիսատ գործ չը Թողնի իր յաջորդների համար, որոնք ո՞վ գիտէ թէ ինչպէս կը վերաբերվեն նրան։

Չը պէտք է մոռանալ այն հանգամանքը, որ Թեմ. դպրոցի շէնքը մի հասարակական հիմնարկութիւն է, որը գուցէ դարեր կեանք է ունենալու, որը բացի ուսումնարան լինելուց կարող է ծառայել հասարակութեանը միաժամանակ և իբրեւ ժողովատեղի և իբրեւ Թատերաբեմ։

Ցանկալի է, որ դրա համար գնված տեղը լինէր շատ ընդարձակ, ուր բացի ուսումնարանից ժամանակի ընթացքում կարելի լինի կառուցանել և ուրիշ հարկաւոր շէնքեր. պէտք է այդ տեղն ընտրել հայոց Թաղերի կենտրօններից ոչ շատ հեռու, մաքուր օդ ունենայ, ազատ լինի փողոցի աղմուկից. իսկ շէնքը համաձայն լինի դպրոցական ու առողջապահական բոլոր պայմաններին։

Ամբողջ Թեմի համար կառուցվող մի այսպիսի կարեւոր շինութիւն գլուխ բերելու համար հոգաբարձութիւնը պարտաւոր է օգնութեան գալ ամբողջ Թեմին։

Լ. Մարկոսեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Կովկասեան կօնցերտ.—Օպերային ներկայացումներ.—Ուսանողական երեկոյթ.—Ներկայացում Շուշում)։

I

Կիրակի օրը տեղի ունեցաւ «Արեւելեան նուագախմբի ընկերակցութեան» կովկասեան կօնցերտը Բեշչեանի ղեկավարութեամբ։

Երեսուն հոգուց բաղկացած մի նուագախումբ Թառի, քեամանչայի, սրինգի, դափի վրա նուագեցին մի շարք երաժշտական գործեր թէ խմբովին և թէ սօլօ։

Բեշչեանի փորձը հետաքրքրական է և արժանի ամեն խրախոյսի ու քաջալերութեան։ Բեշչեան մշակել է հայկական, պարսկական, վրացական, քրդական եղանակներ, յարմարեցնելով նրանց խմբական նուագածութեան։ Նա յօրինել է և ինքնուրոյն եղանակներ, ինչպէս օրինակ՝ Յ. Թումանեանի «Արտասւաց» փեշ-ը հայի երգերը։

Ուշադրութեան արժանի է, որ պարսկական եղանակների մէջ նա խմբական է դարձրել բոլոր «դեհֆերը»։ Հիմնական եղանակը կատարվում է եզակի՝ մէկի ձեռքով, իսկ դեհֆը խմբովին։ Այդ ձեւով դեհֆը ստանում է յատուկ բնաւորութիւն, որ շատ յարմար է ըստ էութեան երաժշտութեան գաղափարին։

Բեշչեանի խմբական նուագածութիւնը պարունակում է աչքոյ և կատարեալ կողմեր, բայց ընդհանուր առմամբ կարօտ է դեռ մշակութեան։ Կիրակի օրվայ կօնցերտը տուեց միայն մի ապացոյց, որ ասիական գործիքներից կարելի է կազմել նուագախմբեր և կատարել շատ գեղեցիկ երաժշտական Թեմաներ։

Նուագախմբի գլխաւոր Թերութիւնը Թաւ ձայների պակասութիւնն է։ Եղանակների մեծ մասը բարձր նօտաների վրա է հիւսված, բարակ ձայներով է արտայայտվում։

Իսկ այդ հանգամանքը թէ վնասում է ներդաշնակութեան պահանջին և թէ թուլացնում է խմբերգի տպաւորութիւնը։ Օրինակ, եթէ «Ջայն տուր ով ծովակ» երգի կատարումը գրված էր բարձր լարի վրա և այդ պատճառով նա ճնճոցի տպաւորութիւն էր թողնում, միևնոյն ժամանակ հիմնական եղանակը զրկվել է յորդոր ընթացքից և կարծես բաժանվել է կտորների և ցրիւ եկել։

Գեղեցիկ էին և տպաւորիչ Կարա Մուրզայի «Սուրբ Կարապետը» և «Ալագեազը»։ Նրանց մէջ պահպանված էր չափը, ամբողջութիւնը և երգի բնաւորութիւնը։

Վատ գործ չէ «Ձմեռվայ գիշերը», բայց նա կարօտ է բարեփոխութեան։ Ցանկալի է, որ մրրկի ձայնը սկսվի փոքր ինչ ուշ և արտայայտվի ոչ մլաւոցի ձևով։ Նա յամենայն դէպս տպաւորիչ է։

Թառի և քեամանչայի վրա ածող մի քանի երաժիշտներ նուագեցին սօլօ պարսկական և քրդական (Օհանեան) եղանակներ և արժանացան բուռն ծափահարութիւնների։ Վատ չէր սօլօ կատարված Եկմալեանի «Մօր արցունքը» եղանակը, բայց չափազանց միօրինակ էր։ Նուագողը նուրբ և գեղեցիկ ձայներ էր արտայայտում, բայց կիսամաշ։ Հետաքրքրական էր և Միրզօյեանի «Մարէն կուգայ» եղանակի կատարումը։

Կօնցերտը թէև երաժշտական՝ փոքր աջող էր։ Մի քանի եղանակներ կրկնվեցին։

Հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ կօնցերտի դահլիճից։

Բեչիրեանը դեռ շատ երիտասարդ է և ինքը շարունակում է կատարելագործվել երաժշտութեան մէջ։ Հետաքրքրվելով կովկասեան նուագործիքներով նա կարող է կատարելագործել սկսած ձեռնարկութիւնը։ Նպատակայարմար կը լինէր անշուշտ, եթէ նա ծանօթանար այն առաջադիմութիւնների հետ, որ արել են Հունգարիայում, Ռումինիայում, Սպանիայում ազգային նուագախմբեր կազմակերպելու գործում, որովհետև արևելեան եղանակները և արևելեան գործիքները այնտեղ մի որոշ աստիճան դեր են խաղացել։

Կովկասեան գործիքները մինչև այժմ շինվել են որոշ չափով, որի սահմանից նրանք դուրս չեն ելնում, մինչդեռ ներդաշնակութեան և խմբանուագի համար անհրաժեշտ են աւելի թաւ և թանձր ձայներ։ Կարևոր է փորձեր անել զանազան չափի գործիքների վրա և լրացնել ներդաշնակութեան թերութիւնները։ Քեամանչան մի որոշ աստիճան ճկունութիւն ունի կատարելագործութեան՝ ենթարկվելու, որը և պէտք է աջողեցնել։

Բեչիրեանի կօնցերտի վրա մենք նայում ենք իբրև մի փորձի վրա, որը իր թերութիւնների հետ միասին ցոյց է տալիս դրական մի բան, այն է, որ կարելի է արդիւնաւէտ կերպով գործել ընտրած ասպարէզում։

Առաջիկայ հինգշաբթի, ամսիս 8-ին նոյն դահլիճում կրկնվելու է կօնցերտը։

II

Երգչուհի Մեդէա Ֆիգներ գեղարուեստական հաջողակ հաճոյքներից մէկը պատճառեց Տատեանայի դերով «Եվգենիյ Օնեգին» օպերայի մէջ։

Թիֆլիսի երաժշտասէր հասարակութիւնը այդպիսի Տատեանա չէր տեսել մինչև այժմ։ Մեդէան կեանք և եռանդ էր ներշնչել Տատեանայի ամեն մի խօսքին և իր խաղով հանդիսացրեց Պուշկինի պօէմայի հերոսուհուն այնպիսի հարազատութեամբ, որ անմոռանալի կերպով բնեռեց նրա տիպը և արտայայտութիւնը հանդիսականի երևակայութեան մէջ։ Երկրորդ տեսարանը, որ յայտնի է նամակի տեսարան անունով, գեղարուեստական գործի մի փառաւոր յաղթանակ էր Մեդէայի համար։ Որքան զգացմունք, որքան խոր ըմբռնողութիւն հոգեկան զեղմունքների և ելևէջների։ Մեդէան արժանացաւ ամենաջերմ և բուռն ծափահարութիւնների։

Օնեգինի դեր կատարող երգիչ Սօկօլսկիյ ախորժելի և գեղեցիկ ձայն ունի, բայց անփորձ Օնեգին է, պակասաւոր խաղով։

Անսամբլը անհաւասարակ լաւ էր։ Օպերայի բեմականը բարեփոխված էր զգալի կերպով։

Միրոդ

III

Շաբաթ, ապրիլի 7-ին, տեղի ունեցաւ ուսանողների օգտին մի երեկոյթ Թիֆլիսի Արտիստական ընկերութեան դահլիճում։

Երեկոյթը բաղկացած էր գրական-երաժշտական բաժնից և պարերից. թէ կարդացված ոտանաւորները, թէ խմբական և թէ սօլօ երգերը գտան հաւանութիւն հանդիսականների կողմից։

Դահլիճում տիրում էր աշխոյժ և ուրախ տրամադրութիւն։

Երեկոյթից գոյացած արդիւնքի քանակը դեռ վերջնականապէս չէ պարզված։

IV

Շուշի, ապրիլի 1-ին

Շուշում կեանքը միօրինակ և ձանձրալի է անցնում, հետևապէս ամեն մի երեկոյթ կամ ներկայացում տեղի ունեցած դէպքում բաւական հասարակութիւն է յաճախում, ուր ամեն մի անհատ քիչ թէ շատ հոգեկան բաւականութիւն է ստանում։

Մարտի 31-ին երեկոյեան Շուշու հոգևոր դպրոցի դահլիճում կայացաւ թատրոն-համերգ յօգուտ ռէալական դպրոցի չքաւոր աշակերտութեան։ Դահլիճը ծայրէ ծայր լիքն էր երկսեռ հասարակութեամբ. կային բաւականի ռուսներ երկու սեռից, զինուորականներ և պաշտօնական անձնաւորութիւններ. նուագում էր աշակերտական խառն նուագախումբը։

Համերգ-թատրոնը բաղկացած էր երկու բաժանմունքից։ Առաջ հայերէն լեզուով խաղացին Բրանդէսի «Հիւր» դրաման 2 գործ., որը իր իմաստալից բովանդակութեամբ մեր թատրոնական գրուածքների զարդը կարող է կազմել։ Գլխաւոր դերակատարներ օր. Ղազարբէգեանը, պ. պ. Բէջանեանը և Այվինեանը խաղը այնքան էլ աջող չէր. առաջին գործողութեան մէջ ձայները շատ թոյլ էին լըսվում։ Վերջին կարգում կանգնած աշակերտութիւնը իրան շատ անկարգ էր պահում, ծիծաղ, քրքիջ, աղմուկ թոյլ չէին տալիս հանդիսականներին իրանց ուշադրութիւնը կենտրոնացնելու դերակատարների խաղի վրա։ Երկրորդ գործողութեան մէջ դերակատարները աւելի աշխոյժով էին խաղում և լաւ տարան իրանց դերերը։ Այս գործողութեան ժամանակ վերջին շարքերում կանգնածները իրանց վայելուչ էին պահում, որովհետև իրաւացի նկատողութեան էին արժանացել թէ հասարակութիւնից և թէ դերակատար պ. Բէջանեանից, որը բեմից գոչաց թէ լռեցէք։

Ցետոյ խաղացին ռուսերէն լեզուով Ֆեօդորովի «Ընտանեկան փոթորիկ» վօդևիլը, մէկ գործողութեամբ։

Երրորդ մասը ամենաաջողն էր. համերգայինը։ Ռէալական դպրոցի երիտասարդ ուսուցիչ պ. Յարութիւն Մելիքեանը մօտ 90 հոգուց բաղկացած քառաձայն խումբ էր կազմել և կարճ ժամանակվայ ընթացքում հասարակութեան տուեց բաւականին գեղեցիկ և ներդաշնակ կազմված երգեր։ Խումբը երգեց Կոմիտաս վարդապետի «Ալագեազ», «Մոնա եար», «Խումար պառկէ» Կարա-Մուրզայի «Վարդ կօշիկս» և Գր. Միրզայեանի «Մարէն կուգայ» ներդաշնակ երգերը։ Գովելի և խրախուսանքի արժանի է պ. Յարութիւն Մելիքեանի եռանդը, որ ինքը այնքան էլ մասնագէտ չը լինելով ձայնագրութեան մէջ, բայց կարողացել էր վերոյիշեալ երգերը կարճ ժամանակում սովորեցնել աշակերտ-աշակերտուհիներին։ Բացի հայերէն երգերից պ. Գերասիմօվը (ռուս) սօլօ երգեց մի քանի օպերային կտորներ։ Պարոնի ձայնը շատ դուրեկան է և բարձր նօտաներում շատ զօրեղ է հնչում։ Այնուհետև երաժշտապետ պ. Լեմոսը ջութակի վրա մի քանի կտորներ նուագեց. նրան ձայնակցում էր դաշնամուրի վրա տիկին Սմորադսկայան։ Հանդիսականները թէ Մելիքեանին և թէ միւսներին բուռն ծափահարութեամբ էին գնահատում։ Համերգից յետոյ տեղի ունեցան եւրոպական և ասիական պարեր մինչև ժամը 3-ը։ Աշակերտական երաժշտական խումբը բաւականին աջող նուագում էր։

Լ. Յովսէփեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի։ Նիստը բացվում է ժամը 2 և 14 րօպէին։ Նախագահում է Գօլօվինը, որը կարդում է Պետական Խորհրդի նախագահի այրի նամակը, որով այրին շնորհակալութիւն է յայտնում Դումայի ցոյց տուած ուշադրութեան համար։

Ցայտարարվում են կառավարութեան մտցրած օրինագծերը։ Հերթին դրած է այն հարցը,—թէ Դուման Չարչարանքի և Զատկի շաբաթներին աշխատելու է, թէ ոչ։

Սահմանադիր-ռամկավարները և աշխատաւորականները առաջարկում են նիստերը դադարեցնել Չարչարանքի շաբաթվայ չորեքշաբթիից մինչև Ֆօմինի շաբաթվայ երկուշաբթի օրը. աջակողմեանները առաջարկում են—ապրիլի 10-ից մինչև մայիսի 1-ը։

Նախագահը բացատրում է, որ Դումայի կանոնադրութեան համաձայն տարվայ ընթացքում նիստերը ընդհատվում են միայն կառավարական ուկազով. Դուման իրաւունք ունի քննել միայն ընդհանուր ժողովները չըլի օրերը նշանակելու հարցը։

Կարճ վիճաբանութիւններից յետոյ Դուման որոշում է կայացնում—մասնաժողովների պարապմունքները չը դադարեցնել, ընդհանուր ժողովները չը կայացնել Չարչարանքի շաբաթի չորեքշաբթի օրից մինչև Ֆօմինի շաբաթվայ երկուշաբթի օրը։

Ցետաձգվում է անցեալ նիստին մասնաժողովին յանձնված օրինագծերի քննութիւնը մինչև մօտակայ նիստը։

Կարդացվում է այն յայտարարութիւնը, որով առաջարկվում է ագրարային մասնաժողովի անդամների թիւը փոխանակ 99-ի, որոշել ամբողջ Դումայի անդամների 1/5 ով, որովհետև Դումայի իւրաքանչիւր հինգ անդամը ընտրում է մէկ անդամ։

Մինիստրական օթեակում երևում են Վասիլչիկօվը և Կաուֆմանը։

Սկսվում են տաք և վառվռուն վիճաբանութիւններ, որոնցից Տեսլէնկոյի յայտարարութեան համաձայն պարզվում է, որ հարցը ծագեց նրանից, որ ագրարային մասնաժողովի անդամների թիւը սահմանափակելու պատճառով—միայն չորս ձայն ստացողները վիճաբանութեան ենթարկվեցին, որի հետևանքն այն եղաւ, որ սահմանադիր-ռամկավարների երկու թեկնածուն դուրս մնային։

Ալէքսինսկին յայտնում է, որ այդ դէպքում քննութեան պէտք է ենթարկել սահմանադիր-ռամկավարների խնդիրը և պէտք է մերժել։

Պուրիշկեվիչը ծափահարում է Ալէքսինսկուն։

Ստախօվիչը (Միխայլ) պաշտպանում է Ալէքսինսկուն։

Տեսլէնկօն յիշեցնելով Ալէքսինսկուն, որ նրան բոլորից լաւ յայտնի է, որ սահմանադիր-ռամկավարների կուսակցութիւնը յանուն արդարութեան կարող է իր ձայները տալ ուրիշ կուսակցութիւնների թեկնածուներին, յայտնում է, որ սահմանադիր-ռամկավարները յետ են վերցնում իրանց յայտարարութիւնը։

Դուման անցնում է ագրարային հարցի վիճաբանութիւններին։

Դահլիճը դատարկվում է։

Պետրօժէնկօն գանգատվում է, որ հողային դրութիւնը ճնշիչ դրութիւն է, անհրաժեշտ է համարում՝ ընդհանել գիւղացիական հողից օգտվելու շրջանը մասնաւոր սեփականատէրերի հաշւով։

Նոյնը ասում է Շիմանսկին նրան ուղարկած գիւղացիութեան կողմից, որը յանձնարարել է հարցը լուծել ռուսական Դումայում, և ոչ թէ լեհական սէյմում։

Մերժվում է հռետորների խօսելու ժամանակը 10 րօպէով սահմանափակելու առաջարկը։

Աճիկինը առարկում է Պուրիշկևիչին, նրան իսկական ռուս փարիսեցի անուանելով։

Նախագահը խնդրում է հռետորին խօսել հողային հարցի մասին։

Աճիկինը շարունակելով, Ռուսաստանում ագրարային հարցը համարում է ոչ միայն տնտեսական, այլ և քաղաքական. նրա լուծումը անքակտելի կերպով կապված է քաղաքական ազատութեան հետ։

Ալէքսինսկին պատասխանելով աջակողմեաններին, գտնում է որ փետրվարի 19-ի մեծ բարենորոգումը գիւղացիների հողի ստիպողաբար գրաւման ակտ է յօգուտ կալուածատէրերի. կարծում է, որ կալուածատիրական հողերի առաջիկայ սեփականական գրաւումը ոչ թէ գիւղատնտեսական կուլտուրայի և առաջադիմութեան օազիսների կործանում է, այլ ճորտական ոջխերի տապալում, ոջխեր, որոնք ծծում են գիւղացիների վերջին հիւթը։ Հռետորը քննադատօրէն գնահատում է կառավարութեան միջնաժամյական ագրարային օրէնսդրութիւնը, և գտնում է, որ նա ուղղված է բացառապէս ռուս գիւղի հարուստ խաւերի օգտին. գիւղացիական բանկը աւելորդ թիքա է ազնուականութեան շահերի տեսակէտից. այն եզրակացութեան է գալիս, որ հողազրկութիւնը ոչնչացնելու համար անհրաժեշտ է ոչնչացնել կալուածատէրերի հողատիրութիւնը, և գրաւել կալուածատիրական հողերը առանց յետ գնման։

Պուրիշկևիչը աղաղակում է. «Ձեռքերը վեր»։

Կրուպենսկին հարցնում է. «Իսկ հիմնական օրէնքները»։

Ալէքսինսկին պատասխանում է. «Ես ճանաչում եմ միայն մի հիմնական օրէնք»։

Նախագահը նկատում է, որ հիմնական օրէնքները պարտադիր են և՛ սօցիալ-դեմոկրատների համար։ (Ծափահարութիւններ)։

Ալէքսինսկին անցնում է կուսակցական ագրարային ծրագիրներին, բացասաբար է վերաբերվում դէպի աջակողմեանների և սահմանադիր-ռամկավարների ծրագիրները, որովհետև նրանց մէջ շատ կալուածատէրեր կան։

Երբ սկսում է խօսել Սինադինօն, դահլիճը համարեա դատարկվում է։ Նա ապացուցանում է, որ սօցիալիստները առաջարկում են մեր ամբողջ պետականութիւնը սասանեցնել. սակայն դա կեանքի եղանակի սասանեցում է. գտնում է որ ագրարային հարցը շատ բարդ հարց է և կարծում է, որ ագրարային մասնաժողովի ոյժերից վեր է կարճ ժամանակամիջոցում արագութեամբ բէալ հետևանքներ տալ։ Ապա անցնելով 99 անդամների օրինագծին, հերքում է թէ հողը—Աստծոյ շնորհ է. հարցի խնդրի աստիճանաբար լուծումը հընարաւոր է համարում միայն բարեկամական ջանքերով, և ոչ կառավարութեան, աջակողմեանների, կենտրոնի և ձախակողմեանների միջակայ փոխադարձ կշտամբանքներով. թըւում է մի շարք օրինակներ, խօսում է համայնքի և ծխական (ПОДВОРНЫЙ) տիրապետութեան դէմ, նախապատւութիւն տալով դաստակերտային տնտեսութեանը, (ХУТОРСКОЕ ХОЗЯЙСТВО). իր ճառը վերջացնում է հաւատ յայտնելով՝ թէ օրինաչափ Դումայի ստեղծած ագրարային մասնաժողովը օրինաչափ կը լինի և կը մերժէ բոլոր՝ հիմնական օրէնքներին անհամակերպվող առաջարկութիւնները։

Կարդացվում է եկեղեցական օրէնսդրութեան համար 16 հոգով բաղկացած մի մասնաժողով ընտրելու առաջարկը։

Ստենբօկ-Ֆերմօրը անձնական գործով պատասխանելով Ալէքսինսկուն, ասում է, որ նա այժմ աւելի շատ համոզվեց, որ սօցիալ-դեմօկրատները ձգտում են ոչ թէ հարցը լուծելու, այլ խռովութիւն սերմանելու։ «Ո՛չ ես, ոչ էլ Ստենբօկ-Ֆերմօր կոմսերից որևէ մէկը չեն ծախել իրա՛նց հողերը գիւղացիական բանկին։ Եւ չեմ կարող խօսել գիւղացիների հետ, սակայն երբէք հող չունեցող Ալէքսինսկու խօսքերին ես ոչ մի նշանակութիւն չեմ տալիս»։

Ժամը 5 և 50 րօպէին նիստը փակվում է։

—

Ապրիլի 6-ին նիստը բացվում է ժամը 2 և 12 րօպէին։ Նախագահում է Գօլօվինը։ Կարդացվում են ժողովրդական լուսաւորութեան մինիստրի մտցրած երկու օրինագծերը։ Հերթից հանվում է Գրօզնի նախկին պաշտօնատար Մասլովին աքսորելու առիթով ներկայացրած հարցապնդումը։

Պերգամենտը, իբրև հարցապնդումների մասնաժողովի նախագահ, զեկուցում է, որ Ազգաչինսկի բերդում բանտարկեալներին ծեծի ու ջարդի են ենթարկել, որի համար ներկայացրել են հարցապնդում։

Ուսպենսկին պաշտպանելով հարցապնդումը, մռայլ գոյներով նկարագրում է բանտերի կեանքը, այն հալածանքները, որ տալիս է բանտային վարչութիւնը բանտարկեալներին, օրինակ է բերում Սազօնովին և Սպիրիդօնովնային տուած չարչարանքները. մատնանշում է որ վերջին ժամանակներս յաճախ կրկնվող փախուստները ոչ թէ հսկողութեան աջալըրջութիւն են ծնում, այլ ռեպրեսիաներ բանտարկեալների վերաբերութեամբ. կարծում է որ կառավարութիւնը պէտք է բաւականանայ չէզոքացնելով քաղաքական բանտարկեալներին և պաշտպանել նրանց ամեն տեսակ մարմնական պատիժներից, չարչարանքներից և նշաւակներից։

Դօլգօպօլօվ խօսում է ազատագրական շարժման մասին։

Նախագահը կրկնակի առաջարկում է նրան խօսել ըստ էութեան։

Հռետորը շարունակում է խօսել ազատագրական շարժման մասին։

Կելեպօվսկին յայտնում է, որ Դումայի ամբիոնից խօսելու իրաւունքը տուել է նրան Թագաւոր կայսրը. և ոչ թէ Դումայի նախագահը։

Նախագահը խնդրում է նրան իջնել ամբիոնից։ (Ձախակողմը և կենտրոնը ծափահարում են)։

Ալէքսինսկին գտնում է, որ ռուս օրէնքների մէջ միշտ կարելի է ապօրէնի գործողութիւնների արդարացում գտնել։ Նախագահը կանգնեցնում է հռետորին։

Ալէքսինսկին գերադասում է իջնել ամբիոնից, որովհետև ուրիշ արտայայտութիւն չէ գտնում իր միտքը պարզելու համար։

Պետրօվսկին տեղական ադմինիստրացիայի անօրինաչափութիւնը կապում է ընդհանրապէս իշխանութեան անօրինաչափ գործողութիւնների հետ։

Կրուպենսկին գտնում է, որ հարցապնդման քննութիւնը հետամուտ է ոչ թէ ագիտացիական նպատակի, այլ հարցի լուծման. վիճաբանութիւնների կրքոտութիւնը նրան բոլորովին անհասկանալի է. ամեն սպանութիւն՝ որտեղից էլ բղխէ, պարսաւանքի է արժանի. այժմ նրան հասկանում են ոչ միայն աջակողմից, այլև ձախակողմից. հարցը հաղորդված է ոչ այնքան ստույգ. «ինձ անձամբ յայտնի է, որ բանտային վարչութիւնը չէ ծեծել և չէ ճնշել բանտարկեալներին, այլ վախեցել է նրանցից»։

Պուրիշկևիչը գտնում է որ ամեն տեսակ ծեծ գարշելի բան է, եթէ առաջ բերված տեղեկութիւնները ճիշտ են, ուրեմն տեղական ադմինիստրացիան արժանի է պարսաւանքի և անարգանքի, եւ առաւել որ քաղաքական բանտարկեալները, — Պատասված, գաղափարի համար չարչարված մարդիկ են. սակայն տարբերութիւն պէտք է լինի բանտի և դրախտի մէջ։

Նախագահը անտեղի է համարում հարցի այդօրինակ դրութիւնը։

Պուրիշկևիչը հնազանդվում է և շարունակելով մատնանշում է, որ չը կան երկու թշնամի բանակներ—ժողովուրդ և կառավարութեան, կայ միայն կառավարութիւն, որը բարեխղճօրէն և առաւել քան բարեխղճօրէն գործադրում է հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, և յանցաւորներ, որոնք վնասում են պետականութեան հիմունքներին. Ապա Պուրիշկևիչը անցնում է Ուսպէնսկուն հակաճառելու, նրա ասած այն խօսքերի համար, թէ «ծեծում են ամենքը և ամեն տեղ, ծեծում են իսկական ռուս մարդիկ»։ Պուրիշկևիչը առաջարկում է այդ ապացուցանել փաստերով, պնդում է, որ ռուս մարդկանց դաշնակցութեան ներկայացուցիչները երբէք բռնութիւններ չեն սկսել, այլ միայն պատասխանել են բռնութիւններին. ռուս մարդկանց մէջ հազարաւոր, միլիօնաւոր մարդիկ կան… (աղմուկ, ծիծաղից շատերը թուլանում են, հեհեոց, ծաղր)։ Պուրիշկևիչ.—«ինչպէս ռուս մարդկանց դաշնակցութեան նախագահի օգնական, ես հաստատում եմ, որ աջակողմից ոչ մի սպանութիւն չէ կատարվել. եթէ Օդեսայից հասնող ծեծելու լուրերը ճիշտ են, դրանք միայն պատասխան են ձախակողմեանների ծեծ ու ջարդի»։

Լիւցը հոկտեմբերականների ֆրակցիայի անունից առաջ բերած տեղեկութիւնները—եթէ ճիշտ են միայն—բաւական է համարում հարցապնդում անելու։

Ալէքսինսկին, պատասխանելով Պուրիշկևիչին, ներկայ դրութիւնը ոչ թէ կռիւ է համարում, կռիւ կառավարութեան և ժողովրդի մէջ, այլ կառավարութեան յարձակումների մի փաստ. առաջարկում է ընդունել հարցապընդումը, իբրև արտայայտութիւն այն բանի, որ Դուման մէկ է ժողովրդի հետ, ժողովրդի մարտիկների հետ։

Ի. Հասանովը պաշտպանում է հարցապընդումը։

Բօբրինսկին, առարկելով Ալէքսինսկուն, մատնանշում է, որ չափաւորականները և աջակողմեանները մտադիր են ձայն տալ յօգուտ հարցապնդումը ընդունելուն։

Րօդիչեվը առաջարկում է թողնել կրքոտութիւնը և քուէարկել հարցապնդումը։

Դուման միաձայն ընդունում է հարցապընդումը։

Պերգամենտը զեկուցանում է, որ գեներալ Տաուբէին Բագու ուղարկելու նկատմամբ, մասնաժողովը փաստեր չը գտնելով հարցապնդելու, առաջարկում է խնդրել կառավարութեան բացատրութիւն տալ 40-օրյա յօդուածի կարգով։

Աբրամովիչը մանրամասն նկարագրում է նաւթային գործադուլը, համարելով նրան տեղական բնաւորութիւն ունեցող գործադուլ։

Ստրուվէն ապացուցանում է, որ գործադուլը ոչ միայն համապետական, այլև համաժողովրդական նշանակութիւն ունի. նրան ամենալուրջ համարելով երբևէցէ եղած գործադուլներից, կարծում է, որ գեներալ Տաուբէն ուղարկված է ոչ միայն ճնշելու բանուորներին, այլև արդիւնաբերութեան վրա, որովհետև առայժմ, հաշտարար մարմին դեռ գոյութիւն չունի։

Կապուստինը զարմանում է թէ ինչու կառավարութիւնը իր ժամանակին միջոցներ ձեռք չառաւ գործադուլի առաջն առնելու համար։

Եվրէինով և Սաղաթելեան մռայլ գոյներով նկարագրում են նաւթային բանուորների դրութիւնը. գեներալ Տաուբէի առաքելութեան մէջ տեսնում են կառավարութեան օգնութիւն կապիտալիստներին։

Առաջարկվում և ընդունվում է վիճաբանութիւնները դադարեցնել։

Միաձայն ընդունվում է մասնաժողովի որոշումը—Կապուստինի ուղղումը մերժվում է։

Պերգամենտը զեկուցանում է պատժիչ զօրամասի գործունէութեան հարցապնդումը և որ Լանչխուտի ազգաբնակութեան վրա առանց պատճառները յայտնելու դրված է 45000 ր. տուգանք։

Ծերեթելին պաշտպանում է հարցապնդումը։

Ընդունվում է միաձայն ընդդէմ մէկի—հարցապնդում անել։

Ապա հերթին դրվում է բոլոր յեղափոխական սպանութիւններին և բռնութիւններին պարսաւանք յայտնել։

Կուզմին-Կարավայեվը ժամանակի ուշ լինելու պատճառով, նկատի առնելով հարցի լըրջութիւնը, առաջարկում է յետաձգել այդ հարցի քննութիւնը։

Բօբրինսկին միանում է այս առաջարկութեան։

Դուման միաձայն ընդունում է հարցը յետաձգել։

Վերջում, մտքերի կարճ փոխանակութիւնից յետոյ, Դուման ձայների ճնշող մեծամասնութեամբ հաստատում է Տամբովի նահանգի ընտրութիւնները և որոշում է տեղեկացնել ներքին գործերի մինիստրին տեղական նահանգապետի ապօրինի գործողութիւնների մասին։

Նիստը փակվում է ժամը 6 և 31 րօպէին. հետևեալը կը կայանայ ապրիլի 9-ին։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 9-ին

Կիրակի, ամսիս 8-ին տեղի ունեցաւ գործակատարների ներկայացուցիչների ժողովը, որ ինցիդենտների ու սկանդալների մի անընդհատ շարք էր։ Այդ սկանդալների հեղինակները, ինչպէս միշտ, «տաքարին» ու չափազանց «յեղափոխական» տեմպերամենտ ունեցող դաշնակցականներն էին։

Առաջին ազդանշանը տուեց պ. Խաժակը։

Քաղաքագլուխը, ժողովը բացելով, առաջարկում է նախագահ ընտրել և քուէարկում է առաջարկած երկու թեկնածուներին։ Դաշնակցականների թեկնածուն աւելի շատ ձայն է ստանում։ Մի գործակատար ըստ կարգի խօսք է խնդրում և նկատում է, որ Դաշնակցութեան թեկնածուին ձայն տուողների թւում կան մօտ 200 հոգի, ընդհանուր մօտ 300 հոգուց, որոնք ձայնի իրաւունք չունեն, որովհետև ընտրված չեն գործակատարների կողմից, այլ եկել են իբրև լեգալ գործակատարական ընկերութեան անդամներ։ Նա առաջարկում է բաժանել վճռական ձայները խորհրդակցականից և նորից քուէարկել։ Հազիւ վերջացած այս խօսքերը պ. Խաժակը, առանց իրաւունք խնդրելու նախագահից, գոռում գոչումով, բռունցքները թափահարելով և սեղանը ծեծելով, յարձակվում է քաղաքագլխի վրա, յանդիմանում նրան, որ նա անաչառ չէ, որ դաւեր է սարքում դաշնակցականների դէմ և այլն, և պահանջում է գոռալով, որ քաղաքագլուխը անմիջապէս հեռանայ և յանձնէ նախագահութիւնը պ. Գալստեանին։ Долой, долой!! աղաղակում է կատաղած ամբոխը։ Օրինաւոր բողոքի ձայնը խեղդվում է և բեմ է բարձրանում պ. Գալստեանը։

Նոր նախագահից նորից խօսք եմ առնում և առաջարկում ձայն տալ միմիայն լիազօրներին, որովհետև այդ լիազօրների ժողով է և նորից քուէարկութիւն կատարել։ Բողոքներ, աղմուկ, վայրենի գոռոցներ։ Տեսնելով այդ բոլորը, նկատելով, որ դաշնակցականները ոչ մի դէպքում թոյլ չեն տալ վերընտրութիւն կատարել և կը քանդեն ժողովը, ես առաջարկում եմ թողնել մի կողմը նախագահի ընտրութեան հարցը, հաշուվել կատարված փաստի հետ, միայն յետագայի համար որոշել թէ ով ունի վճռական ձայն այս ժողովում։ Այս առաջարկին հակաճառում է պ. Խաժակը, հակաճառում են միւսները։ Ես խնդրում եմ քուէարկել, որպէսզի վերջ դրվի այդ հարցին և անցնենք օրակարգի այլ խնդիրներին։ Նախագահը չէ անում. ինձնից յետոյ խօսում են տասնեակ հռետորներ, անցնում է մօտ երկու ժամ. իրարանցում, փոխադարձ վիրաւորանքներ, հայհոյանքներ։ Բռունցքներ են, որ թափահարում են միմեանց դէմ։ Եւ ամենից շատ աղմկում է պ. Խաժակը, որ թւում է թէ պէտք է ձգտէր ընդհանրապէս կարգ հաստատել հասարակական ժողովներին անսովոր ու անձանց կրքերի տեղ այդ ամբոխի մէջ։ Նա հինգ վեց անգամ հերթից դուրս տեղից թռչում և գոռում է յարձակվելով հակառակորդների վրա։

Նորից պահանջում եմ մօտ 10-երորդ անգամ պ. Նախագահից քուէարկել իմ առաջարկութիւնը. նորից մերժում։ Ցուցակում գըրված են մօտ տասը հոգի. Վահան, Աբեղ., Երվնդ., Լ. եւն և այլն։ Նախագահը յայտնում է, որ իմ առաջարկը կը դնէ քուէարկութեան, երբ որ բոլորը կը խօսեն։ Դա բացարձակ օբստրուկցիա է «բօյկոտիստ» դաշնակցականների կողմից և կամայականութիւն նախագահի կողմից։ Բայց դեռ այդ բաւական չէ. Նախագահը խօսք է տալիս պ. Խաժակին։—

Ի՞նչպէս, պ. Նախագահ, Խաժակը խօսք չունի։ Պատասխան —Վահանը չի խօսում, ես խօսքը տալիս եմ նրա փոխարէն պ. Խաժակին։ Վահանը մի աշակերտ է, մի մանուկ, կոմերչեսկի ուսումնարանի շրջանում։ Քիչ առաջ թոյլ չը տուին մի ուրիշ աշակերտի խօսելու. նա չի վստահանում խօսել և նրա փոխարէն խօսում է Խաժակը…

Մենք բողոքում ենք նախագահի կամայականութիւնների դէմ։ Բարձրանում է մի անհաւանելի աղմուկ, վայրենի գոռոցներ. մի քանի տեղ բռունցք ու մարտի պատրաստութիւններ են տեսնում։

Եւ այդ բոլորից յետոյ գալիս է ժողովի գլուխ գործոցը, փայլում է դաշնակցական ատրճանակը, որ ուղղվում է մեր ընկերներից մէկի կրծքին։ Եւ այդ ատրճանակ հանողը ամբոխի միջից մի պատահական դաշնակցական չէ, այլ բեմի վրա սկզբից «կարգ պահպանող» մի պարոն։

Ի՞նչ կարելի էր անել սրանից յետոյ։ Ժողովի ոչ-դաշնակցական մասը հեռանում է և առանձին ժողով անելով, մի ռեզօլիւցիա է ընդունում, որտեղ բողոքում է տեղի ունեցած բռնութիւնների ու սկանդալների դէմ և առաջարկում է քաղաքագլխին հետևեալ կիրակի նորից ժողով նշանակել, հրաւիրել այդ ժողովին միայն գործակատարների իսկապէս ընտրված ներկայացուցիչներին և հնարաւորութիւն տալ գործակատարներին ընտրութիւններ կայացնել։

Յանձնելով այս բոլորը հասարակական դատաստանին, մենք հարցնում ենք դաշնակցական գործակատարներին. մինչև ե՞րբ պէտք է դուք խաղալիքներ լինէք մի խումբ դեմագոգների ձեռքին, մինչև ե՞րբ պէտք է այդպիսի թշնամական յարաբերութիւնների մէջ լինէք ձեր վիճակակից և ձեր ընկեր գործակատարների հետ։

Եւ երկրորդ. չէ՞ք գտնում արդեօք, որ այդ սկանդալները տեղի չէին ունենայ, եթէ դուք կազմակերպված լինէիք բոլորդ միասին մի անկուսակցական պրօֆեսիօնալ միութեան մէջ։

Մտածեցէք։

Ս. Շահումեան

—

Թիֆլիս, 12 մարտի

Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութիւնը ստացել է պ. Գալստեանից 3 ր. կայարանից հին շորեր ստանալու քրեհ, Փօթիից պ. Միքայէլ Ալխազեանից յօգուտ չքաւորների 15 ր., Թաւրիզից պ. Կ. Վարդանեանից 3 ր., մի պարոնից 20 աշակերտների փետրվար և մարտ ամիսների ճաշի վարձ 120 ր., տիկ. Դարիա Յովհաննիսեանից մի աշակերտի փետր. և մարտ ամիսների ճաշի վարձ 6 ր.

Հնոտի շորեր ստացված է պ. Ն. Աբէլեանից 3 մանկական վերարկուներ և 1 զոյգ կօշիկ, տիկ. Եղիսաբէթ Թումանեանից 20 կտոր նոր կարած՝ երեխաների, կանանց և տղամարդու սպիտակեղէն, 6 կարմիր կտորեղէն և 23 զանազան մեծութեամբ հնոտի շորեր։ Տիկ. Սաթենիկ Կաֆեանից 19 կտոր, պ. Տիգրան Բաժոյեանից 10 կտոր, տիկ. Փառանձեմ Արղումանեանից մի պարկ ալիւր և 85 կտոր հնոտի շորեր, մի անյայտից 12 կտոր, «Երկրի» խմբագրութեան միջոցով Օդեսսայից 3 արկղ զանազան հնոտի շորեր և մի փոքր հակ Բօրժօմից։

Վարչութիւնը պարտք է համարում յայտնել իր խորին շնորհակալութիւնը բոլոր նուիրատուներին։

Նախագահ վարչութեան՝ Ս. Յարութիւնեան

Քարտուղար-անդամ՝ Ա. Աթանասեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղքատանոցների օգտին ստացանք Վառվառէ Օրբէլիից 50 րուբլի, որը նա յատկացնում է իր հանգուցեալ հայր Մովսէս Արղութեան-Երկայնաբազուկի յիշատակին, հոգեհացի փոխարէն։

—

Ներքին գործերի մինիստրութեան զէմստվային բաժինը Կովկասի Փոխարքայի տրամադրութեան տակ—մատակարարական և սերմացուի պէտքերի համար դրած է իբրև փոխատւութիւն տալու 166,122 րուբլի։ Գանձակի նահանգի Արեշի գաւառի Մուրսալ և Կարասուկումլա գիւղերի բնակիչներին—2410 ր. Թիֆլիսի նահ. Բօրչալուի գաւ. 24 գիւղերին—28,272 ր. և Երևանի նահանգի, Երևանի, Էջմիածնի և Նոր-Բայազէթի գաւառների 39 գիւղերին—135,440 րուբլի։ Ընդամենը այս գումարի հետ ներքին գործերի մինիստրութիւնը մինչև օրս Թիֆլիսի, Գանձակի, Բագուի և Երևանի նահանգների կարիքաւոր ազգաբնակութեան բաց է թողել 785,435 ր.։

—

Կովկասի Փոխարքան թոյլատրել է տեղական հայոց կոնսիստորիային տալ 800 րուբլի այն գումարներից, որ ստացվել են հայոց եկեղեցական կալուածքներից, երբ կառավարվում էին պետութեան ձեռքով։

—

Թիֆլիսի 4-րդ արական գիմնազիայի դասատուները, ցանկանալով օգնութեան հասնել սովեալներին, վճռել են իրանց ռոճիկներից յատկացնել որոշ տոկոս (ով ինչքան ցանկանայ) սովեալների օգտին, առանց ազգի խըտրութեան։ Բացի դրանից, նոյն դասատուները որոշել են մասնաւոր խորհրդակցութիւն կազմել և քննել թէ ինչ ձևով և ինչպիսի ձեռնարկութիւն կարելի է ունենալ սովեալների օգնութեան գործը կազմակերպելու մէջ։ Այս համակրելի որոշումը, պէտք է կարծել, որ կունենայ իր հետևողները։

—

Ապրիլի 7-ին, Մետեխի միջանցքում հողը փորելու ժամանակ կրկին գտնվել է մի փոքրիկ սափոր վրաց հին դրամներով։ Հնագէտները այդ դրամները վերագրում են 8-րդ դարին։ Քաղաքային վարչութիւնը վճռել է այդ գիւտի մի մասը յանձնել Կովկասեան թանգարանին, մի մասը տալ վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան, իսկ մի մասը յանձնել Վանքի եկեղեցուն կից կառուցած հնութիւնների թանգարանին։

—

Շարուր-Դարալագեազի գաւառի Ուլխանլուչէն գիւղի հասարակութեան ներկայացուցիչները միջնորդութիւն են յարուցել Կովկասեան բարձր իշխանութեան առաջ՝ պետական գանձարանից անհրաժեշտ գումարներ բաց թողնել՝ շինութիւն կառուցանելու Ուլխանլուչէնի շինական դպրոցի համար, որը մտադրութիւն կայ մէկդասեանից վերածել երկդասեանի։ Ներկայումս այդ դպրոցում ուսանում են 120 երեխաներ և դպրոցի համար յատկացրած է մի շինութիւն եկեղեցական տան մէջ։

—

Ապրիլի 5-ին երեկոյեան ոստիկանութիւնը եռանդուն միջոցներ էր դիմել գտնելու նոյն օրը առևտրական բանկի արտելչիկի վրա ռումբ նետողին. 6-րդ քաղաքամասում Սէննօ փողոցում մի ոմն Իօրդանովի բնակարանում գտել է 10 հատ նետելու համար պատրաստած ռումբեր։ Իօրդանովը բանտարկված է։

—

Ապրիլի 5-ին, առևտրական բանկի մուտքի մօտ արտելչիկ Նիկօլայեվի վրա ռումբ պայթելուց յետոյ, ոստիկանութիւնը ձերբակալել է 11 հոգու, որոնք փախել են ռումբը պայթելուց յետոյ։ Նիկօլայեվին ուղեկցողներից մէկը ճանաչեց ձերբակալվածներից մէկին, ասելով՝ որ ռումբ նետողը նա է եղել և 2-րդին էլ, որը ռումբը պայթելուց յետոյ սկսել է ատրճանակից կրակել։ Ձերբակալվածներից երկուսը եղել են՝ Եփրեմ Նազարեանց և Ասկեր Բաբա-օղլը։ Մեղադրվողները ուղարկված են կոմենդանտական վարչութիւնը։

—

Եղբ. Միրզօյեանների և ընկ. նաւթարդիւնաբերական և առևտրական ընկերութեան բաժնետէրերի ժողովը ապրիլի 1-ին հաստատել է իր նախկին որոշումը—յատկացնել ընկերութեան գումարներից 25 հազար րուբլի Թիֆլիսի ապագայ բարձրագոյն դպրոցին, յիշեալ դպրոցի հիմնվելու մասին բարձրագոյն հրաման ստացվելուց անմիջապէս յետոյ։

(«Зак.»)

—

Տեղական իշխանութեան կարգադրութեամբ, առևտրական բանկի դրամատար Նիկօլայեվին կողոպտելու փորձից յետոյ, Պուշկինեան այգին փակված է։

—

Հաւլաբարի արական պրոգիմնազիան ձեռք է բերում իբրև սեփականութիւն առևտրական դպրոցի շինութիւնը 70 հազար րուբլիով։ Իսկ առևտրական դպրոցը տեղափոխվում է քաղաքի կենտրոնական մասը։

—

Քաղաքային վարչութեան կարգադրութեամբ քաղաքային արհեստաւորաց դպրոցի սանները արձակված են քննութեան համար պատրաստվելու։

—

Ապրիլի 6-ին, երեկոյեան, Թիֆլիսի կայարանի բուֆետի առաջ կանգնած Մ. Վ. Մուրադեանցին (Փօթիի բնակիչ) մօտեցել է մի անյայտ մարդ և յայտնել է նրան, որ նրա մօտիկ մի փողի քսակ է եղել ընկած. վերցրել է, մէջը 500 րուբլի փող կայ և առաջարկել է կէս անել։ Այդ նպատակով նրանք դուրս են գնացել կայարանից և կանգնել են Վօկզալնի և Անդրէևսկի փողոցների անկիւնում։ Այդտեղ նրանց մօտեցել է մի անյայտ մարդ և պահանջել է նրանցից իր կորցրած 500 րուբլին։ Մուրադեանը յայտնելով, որ ինքը ոչինչ չէ գտել, ցոյց է տուել իր 300 րուբլին։ Աւազակը վայրկենապէս խլել է այդ 300 րուբլին և սկսել է փախչել։ Երկու կողոպտիչներն էլ ձերբակալված են։ Նրանք եղել են՝ Վասիլիյ Սացերաձէն և Իլիա Ջինիկաձէ։

—

Ստացանք Կաուցկու «Ներկայացուցչական կառավարութիւն», Ռ. Խան-Ազատի, հեղինակի պատկերով, մաքուր տպագրութիւն, 240 երես, հրատարակութիւն Գէորգ Խանազադեանի, գինն է 40 կոպէկ։

—

Անցեալ օր, ժամի 11-ին, առաւօտեան, Բագւում, Ալէքսանդր III գիմնազիայում, V-րդ դասատան թուաբանութեան ուսուցիչ Կարլ Կլերին Պրօխօրօվիչը, դասաւանդութեան ժամանակ նոյն դասարանի աշակերտ Լիանօզովին՝ մի քանի օրից ի վեր դպրոցից բացակայելուն և վերջին ժամանակներս իր դասին պէտք եղածին չափ ուշադրութիւն դարձրած չը լինելուն պատճառով մի քանի յանդիմանութիւններ և խրատներ է ուղղել։ Սակայն Լիանօզովը իր ուսուցչի խրատալից խօսքերին հակառակ նշանակութիւն տալով՝ համբերել է միայն մինչև դասի վերջը։ Դասաւանդութիւնը աւարտելուց յետոյ, Լիանօզովը հանում է ատրճանակը և ընկնում ուսուցչի ետևից։ Ուսուցիչը աշակերտի դիտաւորութիւնն ըմբռնելով՝ իսկոյն ինքն իրան գցում է ուսուցչական սենեակը։ Մոլեգնած աշակերտը մինչև ուսուցչանոց հետապնդելիս՝ ընկերները հասնում են ետևից և զէնքը յափշտակում ձեռքից։ Այս դէպքը սաստիկ յուգել, վրդովել է բոլոր ուսուցիչներին, որոնք դասաւանդութեան արամադրութիւնից կտրվելով՝ արձակում են բոլոր աշակերտներին։ Պէտք է նկատել, որ այդպիսի տխուր դէպքը, այս տարվայ ընթացքում թւով երրորդն է միևնոյն ուսումնարանում։

—

Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է իշխանուհի Ե. Ի. Ճավճավաձէին Թելաւի գաւառի Կվարելի գիւղում բանալ հասարակական գրադարան։

—

Ապրիլի 2-ին, Բօրժօմում, երեկոյեան ժամը 5-ին, Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչի ատաղձագործարանի գրասենեակն են խուժում 6 դիմակաւորված զինված անձինք, որոնք գանձապահ Լեբեդեվից կորզում են 800 րուբլի։ Չարագործները կողոպտված փողով անյայտանում են գրասենեակը շրջապատող անտառում։

—

Վերջին ժամանակներս Անդրկովկասեան երկաթուղիների գծի վրա երթևեկում է մի անյայտ պարոն, որը իրան անուանում է պարսից հիւպատոսարանի քարտուղար։ Այս պարոնը քննում է պարսկահպատակ բանւորների և երկաթուղային ստորին ծառայողների անցաթղթերը, և նրանից մի քանիսին հեռացնում է աշխատանքներից, առանց երկաթուղային վարչութեան գիտութեան։ Տեղեկանալով այդ մասին երկաթուղային կառավարիչը կարգադրել է իր ենթակայ պաշտօնեաներին չը թոյլատրել պ. քարտուղարին միջամտել ու իրան չը պատկանող գործի մէջ և քննել նրա բոլոր արարմունքները։

—

Շաբաթ օր, մարտի 31-ին, երեկոյեան Բալախանում, 12 անգամ կրակում են «եղբ. Միրզոյեվների» ընկերութեան կառավարիչ Բօբիսօվի վրա, սակայն գնդակներից ոչ մէկը չէ դիպչում։

—

Թիֆլիսի արական 3-րդ գիմնազիայի վերատեսուչ և իգական 4-րդ գիմնազիայի հոգաբարձական խորհրդի նախագահ Ա. Ա. Կօզլովկինը ուսումնարանական շրջանի հոգաբարձուին խնդիրք է ներկայացրել, որով հրաժարվում է իր պաշտօնից։

—

Ապրիլի 15-ից Վլադիկավկազում լոյս կը տեսնէ օսերէն լեզւով «Ձանդ» (գիտութիւն) շաբաթաթերթի առաջին համարը, ժամանոր հաւատարմատար Ա. Կանուկօվի խմբագրութեամբ։

—

Բաթումում, «Մ. Ե. Ֆէյգլ և ընկ.» քիմիական գործարանի բանւորները ապրիլի 5-ին աշխատանքները վերսկսել են, ստանալով 10°/o ռոճիկների աւելացում։

—

Ապրիլի 1-ին, Կրասնավօդսկուց Բագու է հասնում Թաղիեվի «Իսլամ» նաւը, ուր ճանապարհորդների պայուսակները և իրեղէնները խուզարկելու ժամանակ ոստիկանութիւնը Գանձակի նահանգի Չարախլի գիւղի բնակիչ Մ. Ա. Միրզայեանի իրեղէնների մէջ գտնում է՝ մի սուր, ատրճանակ և 34 փամփուշտ, որոնց ոստիկանութիւնը գրաւում է։

—

Ընտրողներին յայտնի է, որ քահանաներից շատերը ստորագրել էին Փոխարքային տուած մահվան պատիժը վերացնելու մասին—խնդիրքը։ Յետոյ, իշխանութեան պահանջի համաձայն, այդ քահանաները ստիպված եղան «ապաշխարել»։ Չը զղջաց միայն քահանայ Կոնդրատիյ Տատարաշվիլին, որը հեռացվեց քահանայութիւնից։ Այժմս սբ. Սինօդից հրաման է ստացվել, որով քահանայ Տատարաշվիլին յանցանքը քաւելու համար պէտք է պահվի մէկ տարի վանքում և այդ ժամանակամիջոցում պէտք է ենթարկվի վանական կեանքի բոլոր խստութիւններին։ Ապրիլի 5-ին, տեղական սինօդի գրասենեակը, լսելով այդ վերոյիշեալ կարգադրութիւնը, որոշեց՝ տեղափոխել Կ. Տատարաշվիլին Սպասօ-Պրեօբրաժենսկի վանքը, և ի նկատի առնելով, որ Տատարաշվիլին այժմ ման է գալիս քաղաքացիական զգեստով, հագցնել քահանայի զգեստ և այնպէս տեղափոխել վանքը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 ապրիլի

ՓԱՐԻԶ, 4 ապրիլի։ «Թան» լրագիրը ասում է, որ Դումայի վերջին նիստերը հիասթափեցրին նրանց, որոնք նրանից կարգին օգտակար աշխատանք էին սպասում։ Ֆինանսների մինիստրի ճառերի ազդեցութեամբ նախահաշիւը մասնաժողովի յանձնելը բարեբար ազդեցութիւն գործեց, սակայն ագրար հարցի վիճաբանութիւնները, ինչպէս և հակառակ մինիստրութեան Հէյսէնի առաջարկութիւնը ընդունելը՝ ժամանակաւորապէս ազատելու դատարանին յանձնած պատգամաւորներին, ստիպում են կասկած յարուցել թէ մի գուցէ կառավարութիւնը անկարող լինի հաստատ և միահամուռ աշխատել Դումայի հետ։

ԼՕՁ, 4 ապրիլի։ Քաղաքումս տեղի են ունենում բազմաթիւ խուզարկութիւններ. ձերբակալվում են բանւորական շարժման պարագլուխները. կալանաւորված են 30 մարդ։ Քաղաքում տերրօրիստական ակտերը շարունակվում են,

ՊՕԼՏԱՎԱ, 4 ապրիլի։ Վերջացաւ Սէվսկի գնդի ապստամբութեան գործի քննութիւնը։ Մեղաւոր ճանաչվեցին 66 հոգի. արդարացան 6-ը առաջինների թւում 7 զինւոր դատապարտվեցին աքսորի։

ՀՌՕՄ, 4 ապրիլի։ «Տրիբունա» լրագրի ասելով ֆինանսների մինիստր Նասսեմինին հրաժարական է տուել։ Նոյն լրագիրը Գաէցից հաղորդում է, որ անգլիական թագաւորին ուղեկցելու է արտաքին գործերի մինիստրի օգնական սըր Հարդինգը։

6 ապրիլի

ԿԻԵՎ. գործադուլ արին բոլոր կառապանները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Զինւորական մինիստրի կարգադրութեամբ զինւորա-բժշկական ակադեմիայից արձակել են 39 ուսանողների։

ՕԴԷՍՍԱ։ Ապրիլի 4-ին, երեկոյեան ժամը 5-ին, արիւնահեղ ընդհարում տեղի ունեցաւ ռուսաց ընկերութեան նաւերը պաշտպանող ռուս մարդկանց դաշնակցութեան և նաւային բանւորների միջև։ Վիրաւորված են 5 հոգի։ Վրա հասած զօրքը շրջապատեց դէպքի վայրը։ Այս դէպքի առիթով գործադուլ արին երեք նաւահանգիստներ։ 15 օտարազգի նաւեր կանգնած են անբեռ. գործադուլ արին և երկաթուղային բանւորները. աշխատում են միայն ռուս մարդկանց դաշնակցութեան անդամները։

7 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բժշկական խորհրդին կից կազմված է մի մասնաժողով կայսրութեան բժշկա-սանիտարական մասի կառավարութիւնը կարգաւորելու նախագիծը քննելու համար։ Մտադրութիւն կայ բժշկական սանիտարական գործը յանձնել հասարակական ինքնավարութիւններին։

ՕԴԵՍՍԱ։ Նաւային աշխատանքները վերսկսվեցին։

Կ. ՊՕԼԻՍ։ Մինիստրների խորհրդում որոշվել է բարեմտութեամբ պատասխանել մեծ պետութիւնների վերջին հաւաքական նօտային, որ վերաբերում է մակեդոնական ժանդարմերիայի բարենորոգման կէտերին։ Այսօր պատասխանագիրը կը յանձնվի դիպլօմատիական մարմնի ամենահին անդամ գերմանական դեսպան Ֆօն-Մարշալին։

ՀԱՄԲՈՒՐԳ։ Կայացաւ բեռնակիրների բազմամարդ միտինգը, ուր վճռվեց աշխատանքները վերսկսել ապրիլի 9-ից։

ՏՕԿԻՕ։ Կայսրի հրովարտակով Հաագայի կօնֆերէնցիայի ներկայացուցիչ Եապօնիայի կողմից նշանակված է գաղտնի խորհրդի առաջին քարտուղար Ցուզիկին, որը Եւրօպա կը մեկնէ ապրիլի 14-ին Սիբիրի վրայով իր միսսիայի մնացած անդամների հետ։

ԲԵԼԳՐԱԴ։ Պաշտօնապէս հրատարակված է ռուս-սերբական առևտրական դաշնագիրը, որ իր ոյժի մէջ կը մտնէ մայիսի 24-ից։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների պալատում գանձատան կանցլեր Ասկվիտը պարզում է Անգլիայի ֆինանսական դրութիւնը։ Եկամուտները ծախքերից 5 միլիօն ֆունտով աւելի են։ Դրանք ծախսվելու են պետական պարտքերը հանգցնելու համար։ Այս տարի նկատվում է բարելաւում և աճում ներքին և արտաքին առևտուրի մէջ, 1907—8 թ. թ. ծախքերը հաշված են 141 միլիօն, անցեալ տարվանից 1,600000-ով պակաս։ Կանցլերը յոյս ունի որ ծախքերը աստիճանաբար կը կրճատվեն։ Եկամուտ ստացվելու է 145 միլիօն։ Ազգային պարտքը պակասել է 14 միլիօնով։ Անցնելով սօցիալական բարենորոգման, Ասկվիտը ասում է, որ ծերութեան դէպքում ապահովագրելը վերին աստիճանի անհրաժեշտ է, սակայն պէտք է աստիճանաբար գործել, նկատի առնելով ֆինանսական դրութիւնը։

ՇԱՆԽԱՅ։ Լաւատեղեակ չինական «Սին-վէնբաօ» լրագիրը պնդում է, որ Չինաստանը իրաւունք է տուել Եապօնիային զինւորական նպատակների համար օգտվել Մուկդէն-Սինմինտին երկաթուղիով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հէնց որ ներքին գործերի մինիստրը լուր ստացաւ Օդեսսայի դէպքերի մասին, անմիջապէս կարգադրեց հրացանաձգութեան մէջ մեղաւոր անձանց ենթարկել պատասխանատւութեան և ձեռք առնել ամենակտրական միջոցներ ապագայ անկարգութիւնների առաջն առնելու համար։ Գեներալ-նահանգապետին պատուիրագրած է—ինչպէս և լինի հէնց տեղնուտեղը խեղդել ամեն տեսակ զինված յարձակումներ և ցրել ռազմիկ խմբերին։

Սենատը անուշադիր թողեց այն բողոքագիրը, որ ներկայացված էր սահմանադիր-ռամկավարների—Պետերբուրգի, Րիբինսկի, Մոսկվայի, Տամբովի, Եարօսլաւի և Վիբօրգի կլուբները փակելու առիթով։

ԼՕՁ։ Տեղական բանւորական բոլոր կազմակերպութիւնների ներկայացուցիչների ժողովում վճռվեց բողոքել, կէսօրեայ գործադուլով, վերջին երկու շաբաթում անմեղ մարդկանց վրա կատարվող սոսկալի և համաճարակային գազանութիւնների դէմ։ Առաջարկվեց հետևել կասկածաւոր անձնաւորութիւններին։ Գործադուլը տարածվել է համարեա ամբողջ քաղաքի վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 ապրիլի։ Լօձից ամբողջ օրվայ ընթացքում տեղեկութիւններ են ստացվել՝ քաղաքի զանազան մասերում կատարվող սպանութիւնների և մահացու վէրքեր հասցնելու մասին։

ՉԵՐԿԱՍԻ։ Պարզվեց, որ Չլադօպօլում պետական գինու պահեստները կողոպտողները եղել են բացառապէս գիմնազիստները։

ՄՕՍԿՎԱ։ Արտասահմանում վախճանված միլիօնատէր Լէդէնցօվը մէկական միլիօն կտակել է Մոսկվայի համալսարանին և տեխնիքական ուսումնարանին։

8 ապրիլի

ԼՕՁ։ Սպանութիւնները շարունակվում են։ Հրէական թաղերում հանգիստ է։ Բանւորները խորհրդակցելով՝ վճռեցին արմատախիլ անել յարձակումները։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ. Դրան պատասխան նօտայում ասված է, որ ընդունվել են մահմեդական ժանդարմերիան վերակազմելու վերաբերութեամբ դեսպանների ներկայացրած հաւաքական նօտայի բոլոր հինգ կէտերը։ Ժանդարմերիային չաջակցող թիւրքաց զօրքերին և Մակեդոնիայի քաղաքացիական ժանդարմերիայի ապօրինի գործողութիւնների դէմ ներկայացրած բողոքագրերը քննելու է Ջօրջիսի նշանակած օֆիցէրը։ Մնացած բողոքագրերը ուղղվելու են անմիջապէս Ջօրջիսին կամ Հիլմի-փաշային։ Վաղը կը կայանայ դեսպանների նոր ժողովը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Քիշինեվի և Ակկէրմանի ուժեղացրած պահնորդութիւնը կը շարունակվի մինչև 1908 թ. ապրիլի 8-ը։

ԿԱԶԱՆ։ Նօբէլի ֆիրմայի ներկայացուցիչը բօրսայում յայտնեց, որ երբ նաւագնացութիւնը բացվի մազութ չի կարելի հայթայթել։ Այս յայտարարութիւնը մեծ իրարանցում ձգեց բոլորի մէջ։ Այդ առիթով բօրսային ընկերութիւնը մի հեռագիր ուղարկեց պատգամաւոր Կապուստինին, որի մէջ խնդրում է պաշտպանել նաւատէրերի միջնորդութիւնը՝ շուտափոյթ միջոցներ ձեռք առնել Բագուի գործադուլը դադարեցնելու, որը սպառնում է նաւատէրերին բոլորովին քայքայել և կործանել գործարանա-գաւառային արդիւնաբերութիւնը։

ՆՕՎՕՉԵՐԿԱՍԿ։ Նոր խուզարկութիւնների ժամանակ ոստիկանութիւնը գրաւեց գիւղացիական շրջանային համագումարի 200 արձանագրութիւնները, 3 ատրճանակ։ Ձերբակալված են 10 մարդ։

ԲԷԼՕՍՏՕԿ։ Դատարանը որոշեց ջարդի գործը յետաձգել։

ԼՕՆԴՕՆ։ Սուէզի ջրանցքի ընկերութիւնը որոշեց թոյլատրել բենզին և նաւթ տեղափոխող նաւերին անցնել ջրանցքով։ Ի նկատի առնելով այս հանգամանքը, մի քանի շուկաներում հաւանօրէն նաւթի գինը կը պակասի 50 %-ով։

ԼՕՁ։ Կուսակցական սպանութիւնների առիթով բանւորական կազմակերպութիւնները վճռեցին դիմել իշխանութեան և խնդրել թոյլատրել ապրիլի 11-ին անկուսակցական բանւորական կօնֆերէնցիա գումարել։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Հաշտութիւն կնքվեց Նիկարագվայ և Սալվատոր հանրապետութիւնների միջև։

ՏԱՄԲՕՎ։ Երեկոյեան ժամը 9-ին ծանր վիրաւորվեց սեմինարիայի ռէկտոր Սիմէօն վարդապետը։

ԱԼԼԱՀԱԲԱԴ։ Կաբուլից ստացված տեղեկութիւնների համաձայն աւղանական էմիրը ճանապարհորդութեան է ձեռնարկել Աւղանիստանում հեծելազօր և հետևակ գնդերի հետ, թնդանօթներով և մեծ շքախմբով։ Նա այժմ գտնվում է Հէրատի ճանապարհին։

Կ. ՊՕԼԻՍ, 8 ապրիլի։ Դեսպանների ժողովում լիակատար համաձայնութիւն կայացաւ։ Մաքսային տուրքերը երեք տոկոսով աւելացնելու հարցը կարելի է վճռված համարել։ Այդ մասին հաւաքական նօտան կը յանձնվի Բ. Դրան վաղը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 ապրիլի։ Ապրիլի 7-ին վերջացան տարրական, բարձր կրթական հաստատութիւնների խորհրդակցութիւնները։ Վերջին նիստում քննվում էին համախմբումների ազատ ունկնդիրների հարցերը կողմնակի մարդկանց ժողովները անպայման անթոյլատրելի ընդունվեցին։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը ցանկացաւ, որ արական սեռի ազատ ունկնդիրները, որ իրաւունք ունեն լինել իսկական ուսանող, համարվեն իբրև ուսանողներ, իսկ կանանց աւելի հնարաւորութիւն կը տրվի լինել ազատ ունկնդիրներ. կանոնները մշակելու է խորհուրդը։

ՏՕԿԻՕ։ Չինական կառավարութիւնը մտադիր է 10 միլիօնի արտաքին փոխառութիւն կնքել՝ մեծ արսենալ կազմելու և Պէկին—Կալգան երկաթուղին կառուցելու համար։

Նոյեմբեր ամսին կայանալու են մեծ զինավարժութիւններ են լինելու Ուցունօմիայի շրջակայքում, Միկադօյի ներկայութեամբ։

Զօրքի մէջ նոր տաշտային թնդանօթներ են մտցնվում, որոնք արձակում են 7200 մետր տարածութեան վրա։ Թնդանօթները արժենալու են 20000 իէն։

ԵԿԱՏԷՐԻՆՕՍԼԱՎ։ Լեռնային դպրոցում ոստիկանութիւնը խուզարկութիւն կատարեց և ձերբակալեց 23 տղամարդի և 8 կանանց։

ՍՕՉԻ։ Ժողովի որոշմամբ Կրասնայա Պօլիանա գիւղը միացաւ ռուս մարդկանց դաշնակցութեան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներարգային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒՍՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վերաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻՇՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(ե. հ. շ.) 48—100

Թիֆլիսի անկուսակցական ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ Ընկերութեան բիւրօն
յայտարարում է
Ընկերութեան բոլոր անդամներին և նոր անդամ գրվել ցանկացողներին, որ ապրիլի 10-ին, ցերեկվայ ճիշտ ժամը 3-ին, լինելու է ընդհանուր ժողով քաղաքային տան դահլիճում, հետևեալ հարցերով զբաղվելու.
1. Ընկերութեան անդամների թիւը ստուգել. 2. Ելևմտական հաշիւը ստուգել և կանոնաւորել. 3. Մեր ընկերութեան կնիքովը թւահամարներ բաժանել մեր բոլոր լրագրավաճառ ընկերներին. 4. Համերաշխութեան միջոցներ մշակել կուսակցական լրագրավաճառների վերաբերմամբ 5. Ընկերութեան գրասենեակ վարձելու հարցը։
(ու. շ. ե.) 2—3

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բաթում			
Պօստատար	1 ժամ	24 ր.	ցերեկվայ
Մարդատար	8 »	5 »	առաւօտեան
»	11 »	8 »	գիշերվայ
Թիֆլիսից դէպի Բագու			
Մարդատար	9 ժամ	13 ր.	առաւօտ.
Պօստատար	7 »	48 »	երեկոյեան
Մարդ-ապրանք.	11 »	38 »	»
Թիֆլիսից դէպի Երևան			
Պօստատար	12 ժամ	40 ր.	գիշերվայ

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը {առաւ. 10—12 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(ա. օ.) 138—150

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36
100—100

Լոյս տեսաւ
„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԻ“
№ 14
ՀԵՏԵՒԵԱԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ
Թիւրքահայի ազատագրութիւնը՝ Թիւրքահայի գործն է — Տ. Ջաւէն
Թիւրքերը և յառաջադիմութիւնը Սաբահէդդին Աբդիւլ-Համիդի մէկ տեսակցութեան առիթով III — Ալիս
Դուք տեղ չէք համնի (բանաստեղծ.) Արփենիկ
Ռուսաստանի քաղաքականութիւնը և Տաճկահայ Խնդիրը — Բ. Իշխանեան
Մատենախօսութիւն (Րիխարդ՝ «Ինչու ենք անջատւում Դաշնակցութիւնից») Տ. Զ.
Ինչու ենք անջատւում Դաշնակցութիւնից — Րիխարդ
Վերակազմեալ հնչակեանների խոհանոցում
Թիւրքահայ գրականութիւն (Կմախքը) — Զ. Եսայեան
Թիւրք բանաստեղծութիւն (Հաւատարմութեան երգումը) — Մէհմէդ Րէուֆ բէյ
Թիւրք թատրօն (Ծագում, պատմութիւն, նախակարապետները) — Թալասօ
Մամուլի շուրջը
Թիւրքահայ հարցի շուրջը — Վահէ
Լուրեր
Յայտարարութիւններ

Լոյս տեսաւ
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-Ի
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ
գիրքը. Թուղթն ընտիր, տպագրութիւնը սիրուն, 112 էջ։
ԳԻՆՆ Է 25 ԿՕՊԷԿ
Հարցնել Թիֆլիսի գրախանութներում, ուր վաճառվում են նոյնպէս. 1) Խուլ Խաչիկ 25 կ.։ 2) Քաջ Աղասի 25 կ.։ 3) Ժամանակը ոսկի 40 կ.։ 4) Սրտից 9 պատմութիւն 40 կ.։ 5) Սասունցի Յովհան 30 կ.։ 6) Երկասիրութիւններ 50 կ.։ 7) Գալօ ափօ, Խաչան 12 կ.։ 8) Աստուած չը ճանաչող 10 կ.։ Շէն Թագաւորի աղջիկ 25 կ.։ 11) Երկու աղբերացեղ 30 կ.։ 12) Հեքեաթներ 30 կ.։ 13) Անմեռ աշխարհ 8 կ.։ 14) Աստուած աղքատի կերպում 20 կօպէկ։
Մեծ գումարով գնողները դիմելու են Քամալեանց Ս-ին՝ Ներս. դպրանոց։
(ե. հ. կ.) 8—20

„ՋԻՒԱՆՈՒ ՔՆԱՐԸ“
Հրատարակութեան Ա. և Բ. հատորները արդէն ուղարկված են բաժանորդներին։
Հետևեալ հատորները լոյս կը տեսնեն առաջիկայ սեպտեմբերին միասին, մի մեծ գրքում ամփոփած։
Մամուլի այժմեան ազատ գրութիւնից օգտվելով, այս երգարանի միացեալ հատորը կը հրատարակվի
բոլորովին նոր խմբագրութեամբ,
մէջ մտցնելով հեղինակի այն բոլոր երգերը, որոնք մինչև այժմ հնարաւոր չի եղել տպագրութեան յանձնելու։
Բաժանորդագրութիւնը փակված է
1—4

Մի ճեմարանաւարտ ուսուցիչ որոնում է
Հայ ընտանիքներում
հայերէնի, հայոց պատմութեան և գրականութեան դասեր։ Պատրաստում է նաև ճեմարանի ու թեմականների բոլոր դասարանների համար։ Դիմել «Մշակի» խմբագրատուն Լ. Գանիէլեանին։ (ե. հ. շ. կ.) 1—4

Փորձված ՈՒՍՈՒՑԻՉ
ցանկանում է պատրաստել երեխաներ՝ իր մօտ կամ ընտանիքներում՝ հայերէնից, ռուսերէնից-ֆրանսերէնից և թուաբանութիւնից։
Աշխատավարձը՝ կամաւոր
Հասցէն՝ «Մշակ»-ի խմբագրատուն։
(ե. հ. շ.) 3—3

Чашка Чистаго Голландскаго КАКАО БЕНСДОРПЪ, принятая послѣ ужина вызываетъ освѣжительный сонъ и укрѣпляетъ нервы. Продается вездѣ.
BENSDORP'S
REINER HOLLÄNDISCHER
CACAO
AMSTERDAM
HOLLAND.
Ներկայացուցիչ՝ Максъ Познеръ, Лодзь. (ապր. 10, 16, 22)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ատասանմանում տպագրուած 96 գոյնով 63×50 սանտ. մեծութեամբ
ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
Գեղարուեստական պատկերի 3-րդ էժանագին հրատարակութիւնը
ԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲԼԻ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՕՇԸ
ՈՐՊԷՍ ԶԱՐԴ ԺԱՄԱՑՈՅՑԻ ՇՂԹԱՅԻՑ ԿԱԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ
Գինն է՝ ՈՍԿՈՒՑ 18 ր.
ԱՐԾԱԹԻՑ 3 »
ճանապարհածախսով
ԵՒ ՈՐՊԷՍ ԲՐՕՇԿԱ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ
Գինն է՝ ՈՍԿՈՒՑ 15 ր.
ԱՐԾԱԹԻՑ 3 »
ճանապարհածախսով
Առանց կանխավճարի չէ ուղարկվում
(հ.կ.ե.) Դիմել՝ Тифлисъ, Вельяминовская, № 24, В. Варданяну. 2—10

Բացված է բաժանորդագրութիւն
ՀԱՅԵԼԻ
Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,
որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։
Տարեկան բաժանորդները կը ստանան՝
1) 50 № «Հայելի»։ 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն։ 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (75×100 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։ 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։ 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկարը։
Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։
Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.։ Կէս տարին՝ 2 ր. դուրսը՝ 2 ր. 50 կօպ.։ Արտասահման տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի։
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՄԵՆ ՏԵՂ, ԹԷ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԹԷ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ ԱՐԺԷ 10 ԿՕՊԷԿ
Մինչև այժմ լոյս են տեսել և ուղարկվել բաժանորդներին հետևեալ գեղարուեստական նկար պրեմիաները. 1) Հաւատ-յոյս-սէր 2) Առատութիւն եւ 3) Խաղաղութիւն Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարները և պրեմիաները։ Պատրաստվում է տպագրութեան համար. 1) Գեղարուեստական նկար պրեմիան № 4—ԳԵՐԻՆԵՐ և զատկական պրեմիան մեծադիր գունաւոր, (14 գոյներով) 75—100 սանտիմ մեծութեան, ընտիր թղթի վրա, ջեղ նկարը—ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ Բ.։
ԾԱՆՕԹ.—Գեղարուեստական նկար պրեմիաները առանձին արժեն հատը 50 կօպէկ։ Մեծադիր գունաւոր նկար պրեմիան 3 րուբլի։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3 կամ Tiflis, Rédaction du Journal «Haeli»։ Լոյս է տեսնում հինգշաբթի օրերը։
Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպէճեան
(եր. հինգշ. և շաբ.) 14—14

KAKAO
ВАНЪ ГУТЕНА
ԼԱՒԱԳՈՅՆ ՍՆՆԴԻՆ Է
ԿԱԿԱՕ
ՎԱՆ-ՀՈՒՏԵՆԸ
ԽՈՒՍԱՓԵԼ ԿԵՂԾԻՑ
Фабриканты C. J. Van Houten & Zoon, Weesp (Голландія).
1—1